Вторичная *переработка строительных отходов* может стать главным методом утилизации. По-другому процесс утилизации может называться как рециклинг. По своему смысловому содержанию **“рециклинг”** вообще – это особая технология, позволяющая повторно использовать отходы производства и потребления. От классической утилизации этот процесс отличается тем, что переработанное сырье далее применяется по своему прямому назначению. В строительстве оно возвращается после промышленного демонтажа сооружений в виде дробленого бетона, колотого кирпича, остатков металла и древесины. Стоит определить преимущества переработки строительных отходов. Главная особенность такого метода заключается в отсутствии необходимости транспортных расходов — весь процесс происходит на месте. К тому же рециклинг не требует специального разрешения, что также экономит средства. При демонтаже в некоторых случаях возможна переработка остатков металлоконструкций прямо на месте, что в действительности удобно. Кроме того, покупатели строительных отходов заинтересованы в приобретении мусора с “одного карьера”.

Таким образом, вторичный щебень – это смесь строительных материалов, бывших в употреблении (кирпичная крошка, бетонный бой, отходы щебня и асфальта). При небольшом бюджете в Арцахе такая смесь стройматериалов является перспективным вариантом для разных строительных работ, например:

- при засыпке котлованов (вторичный щебень, полученный из боя бетонов);

- при строительстве временных дорог (асфальтовое покрытие под действием нагрева может применяться при строительстве или реставрации дорог);
- при укладке дорожных полотен, на которые не возлагаются серьезные нагрузки;
- для обустройства дорожки с декоративной цветной отсыпкой (бой из красного кирпича, из 5...20 мм фракции) на даче, в садах;
- для парковок спортивных машин;
- для обочин;
- для колодца;
- для дренажа;
- для укрепления грунта под фундаментами;
- для засыпки поверхностей (полов, строительных площадок);
- для обратной и различных засыпок;
- для благоустройства могил;
- для выравнивания участков;
- для заезда на участок;
- для засыпки болотистых мест;
- при укреплении почв.

В заключении из всего вышесказанного сделаны **выводы**:

- ежегодно отходы строительства занимают все большую площадь и их захоронение наносит вред экологии, что имеет неблагоприятные последствия для здоровья человека и экологии в целом;
- проблема переработки мусора актуальна не только при строительстве новых зданий и сооружений, но и при сносе существующих;
- при утилизации отходов разрушенных зданий вторичный щебень стал вторичным строительным материалом, который производится из обычного строительного мусора в результате;
 - боя бетона,
 - разборки дорожного покрытия и асфальта, отслуживших свой век,
 - из кирпича и других строительных материалов,
 - являясь вторичным строительным материалом, вторичный щебень сохранил свои свойства и качества тех материалов, из которых был изготовлен,
- утилизация строительных отходов является важной экологической проблемой, решению которой необходимо придать государственный вес;
- экономическая эффективность повторного использования этих ресурсов позволяет в 2-3 раза снизить себестоимость готового вторичного продукта, а в перспективе это позволяет снизить себестоимость строительства, благодаря тому, что выполняем и разрушение зданий, и последующую переработку железобетона и твёрдых строительных отходов;
- согласно ГОСТ Р 57678-2017 строительные отходы, в состав которых входит бетон, кирпич или щебень, могут использоваться для подсыпки дорог, при изготовлении строительных материалов для возведения основания под дороги и фундаментные плиты, при благоустройстве

территорий и др. при наличии соответствующей документации с соблюдением природоохранных, санитарно-эпидемиологических и противопожарных требований законодательства.

Список литературы

- [1] **А.Н. Асаул, Д.А. Заварин, С.Н. Иванов**, Основные препятствия развитию инновационной активности в инвестиционно-строительной сфере. Фундаментальные исследования 4-0 (2015) 180-184.
- [2] Территориальные потери Арцаха в результате второй карабахской войны. <https://www.kavkaz-uzel.eu/blogs/83781/posts/45972>
- [3] **Е.В. Кондращенко**, О проблеме городов по использованию строительных отходов от сноса зданий и сооружений. Научно-технический сборник «Комунальное хозяйство городов» Выпуск 107 (2013) 150-155.
- [4] **П.П. Олейник, С.П. Олейник**, Организация системы переработки строительных отходов. Монография. Федеральное агентство по образованию. МГСУ. Институт строительства и архитектуры, Москва, 2009, 252 с.
- [5] **Dieter. O. Reimann**, Multifunktionale, zukunftsorientierte Rauchgasreinigungstechniken. Brennst.-Warme-Kraft 43 (1991) E61–E64.
- [6] **Е.В. Барышевский, Е.Г. Величко, Э.С. Цховребов, У.Д. Ниязгулов**, Вопросы эколого-экономической оценки инвестиционных проектов по переработке отходов в строительную продукцию. Вестник МГСУ 3 (102) (2017) 260–272.
- [7] **Е.Г. Любешкина**, Твердые бытовые отходы. Проблемы и решения. Пищевая промышленность 312 (2017) 28–30.
- [8] Мини дробилка LEM TRACK 4825 дробилка на гусеничном ходу с приводом от дизельного двигателя с водяным охлаждением. Режим доступа: miniteh.com

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՕԳՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Իրինա Ռոբերտի Բաղդասարյան*, Անժելա Այոնշայի Բարսեղյան

Շուշիի տեխնոլոգիական համալսարան, ք. Ստեփանակերտ, Արցախ

**ira.bagdasaryan.71@bk.ru*

Շինարարական աղբի մեծ կույտերը դժվար է տեսակավորվում և դրանց թաղման վայրերը գնալով փոքրանում են, իսկ հեռացումը դառնում է ավելի դժվար ու խնդրահարույց՝ գործընթացի կազմակերպման ծախսերի պատճառով: Աշխատանքում ներկայացված են շինարարական կոշտ թափոնների տարատեսակներ, որոնք ձևավորվում են այնպիսի գործընթացների արդյունքում, ինչպիսիք են՝ շինարարությունը, քանդումը, շենքերի և շինությունների վերակառուցումը: Ընդգծվում է շինարարական աղբի հեռացման խնդրի լուծման անհրաժեշտությունը, ինչպես նաև առաջարկվում է շինարարական աղբի վերամշակման ժամանակակից մեթոդ, որտեղ նման

թափոնների վերամշակումը շինարարության ոլորտում երկրորդ «կյանք» է ստանում որպես երկրորդական մանրացված քար:

Բանալի բառեր. շինարարական թափոններ, բնակարանաշինություն, օգտահանում, վերամշակում, այտավոր ջարդիչ, ցեմենտի սպառում, երկրորդային խիճ՝

RELEVANCE OF CONSTRUCTION WASTE UTILIZATION AND PROSPECTS OF THEIR APPLICATION IN ARTSAKH

Irina Baghdasaryan*, Anzhela Barseghyan

Shushi University of Technology, Stepanakert, Artsakh

**ira.bagdasaryan.71@bk.ru*

Large build-up of garbage is difficult to out and the sites for burial are getting smaller and smaller, and exporting becomes more difficult and problematic of the cost of organizing the process. The work contains: types of construction solid which are generated as a result of processes such as construction, demolition a reconstruction of buildings and structures. The article emphasizes the need to solve the problem of recycling construction waste, and proposes a modern method of recycling construction, where recycling such waste acquires a second life in the construction sector as secondary gravel.

Keywords: *construction waste, housing construction, recycling, disposal, processing, jaw crusher, cement consumption, secondary crushed stone*

Բաղդասարյան Իրինա Ռոբերտի, տ.գ.թ., դոցենտ (Արցախ, ք. Ստեփանակերտ) - Շուշիի տեխնոլոգիական համալսարան, Ճարտարապետության, քաղաքաշինության, էներգետիկայի և ջրային համակարգերի դեպարտամենտ, (+374)97299093, *ira.bagdasaryan.71@bk.ru*, **Բարսեղյան Անժելա Ալյոշայի, տնտ.թ., դոցենտ** (Արցախ, ք. Ստեփանակերտ) - Շուշիի տեխնոլոգիական համալսարան, Ճարտարապետության, քաղաքաշինության, էներգետիկայի և ջրային համակարգերի դեպարտամենտի ղեկավար, (+374)97260372, *angel_ava@inbox.ru*

Багдасарян Ирина Робертовна, к.т.н., доцент (Арцах, г. Степанакерт) - Шушинский технологический университет, департамент Архитектуры, градостроительства, энергетики и водных систем, (+374)97299093 *ira.bagdasaryan.71@bk.ru*, **Барсегян Анжела Алешаевна, к.э.н., доцент** (Арцах, г. Степанакерт) - Шушинский технологический университет, руководитель департамента Архитектуры, градостроительства, энергетики и водных систем, (+374)97260372, *angel_ava@inbox.ru*
Baghdasaryan Irina, doctor of philosoph (Ph.D) in Engineering, Associate Professor (Artsakh, Stepanakert) - Shushi Technological University, Department of Architechture, Urban Planning, Energy and Water Systems, (+374)97299093, *ira.bagdasaryan.71@bk.ru*, **Barseghyan Anzhela, doctor of philosoph (Ph.D) in Economy, Associate Professor** (Artsakh, Stepanakert) - Shushi Technological University, head of the Department of Architechture, Urban planning, Energy and Water Systems, (+374)97260372, *angel_ava@inbox.ru*

Ներկայացվել է՝ 04.05.2023թ.

Գրախոսվել է՝ 22.05.2023թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.08.2023թ.

**ՓՈՔՐ ՃԱՐՏԱՐԱԴԵՏԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՑԻՍՏԵՌՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԿՐՊԱԿՆԵՐ**

Առնո Մկրտչի Բաղումյան¹, Գնել Վաղարշակի Եղիազարյան²

¹Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

²«Տարբերակ» ճարտարապետական ստուդիա, ք. Երևան, ՀՀ

*baghumyan.arn@gmail.com

Հոդվածն անդրադառնում է քաղաքային միջավայրի փոքր ճարտարապետական ձևերի՝ կրպակների խնդիրներին: Աշխատանքի նպատակն է քննարկել և վերլուծել քաղաքային միջավայրում փոքր ճարտարապետական ձևերին առնչվող խնդիրները, ինչպես նաև արդյունաբերական ցիստեռների կիրառման հնարավորությունները որպես փոքր ճարտարապետական ձևեր: Կատարվել է փոքր ճարտարապետական ձևերի, կրպակների և ցիստեռների վերաբերյալ տեղեկությունների, լուսանկարչական և արխիվային նյութերի ուսումնասիրություն՝ կիրառելով հավաքագրման, մոդելավորման և ընդհանրացման գիտական մեթոդները: Աշխատանքում ներկայացվել են փոքր ճարտարապետական ձևերի միջոցով չօգտագործվող և լրված ցիստեռների վերաօգտագործման և քաղաքային միջավայրում ինտեգրման հնարավորությունները:

Բանալի բառեր. փոքր ճարտարապետական ձև, կրպակ, ցիստեռ, վերաօգտագործում, ինտեգրում, քաղաքային միջավայր

Ներածություն

Ճարտարապետական միջավայրը ձևավորող տարրերի մեջ կարևոր տեղ են զբաղեցնում փոքր ճարտարապետական ձևերը, որոնց դասակարգումը շատ լայն է և ներառում է բազմաթիվ ֆունկցիոնալ գործառնություններ՝ հուշարձաններ, քաղաքային դարպասներ, մոնումենտներ, կրպակներ, վաճառասրահներ, գովազդային վահանակներ, բարեկարգման դետալներ և այլ բազմապիսի ձևեր [1]: Դրանք տեղակայվում են փողոցների, հրապարակների, այգիների և նմանատիպ մարդաշատ վայրերի հարևանությամբ: Այդ է պատճառը, որ փոքր ճարտարապետական ձևերը, ինչպես քաղաքաշինական միջավայրը ձևավորող այլ օբյեկտները՝ շենքերը, շինությունները, հրապարակները, բնական և արհեստական լանդշաֆտները, հավասարապես ազդում են ընդհանուր քաղաքային պատկերի վրա:

Մյուս կողմից, զարգացող քաղաքներում բնակչության աճը և մարդաշատ վայրերում կուտակումներն առաջացնում են սպասարկող օբյեկտների ավելացման պահանջարկ: Այս ամենի շնորհիվ դրական կամ բացասական կերպով հրապարակներում և փողոցներում փոխվում են միջավայրի գեղարվեստական առանձնահատկությունները: Դրա վառ ապացույցն է Լաս Վեգաս

քաղաքը (ԱՄՆ), որտեղ շենքերը և շինությունները քողարկված են տարբեր ֆունկցիաների փոքր ճարտարապետական ձևերի ետին պլանում [2]:

Այդպիսով, հանրության պահանջների, բիզնեսի և շուկայական բաղադրիչների ապահովման հետ մեկտեղ առաջանում են փոքր ճարտարապետական ձևերի գեղարվեստական ներդաշնակության խնդիրներ: Այդ է պատճառը, որ արդի ճարտարապետության առաջ ծառացած խնդիրների շարքին են դասվում նաև փոքր ճարտարապետական ձևերը՝ որպես միջավայրի ձևավորման կարևոր բաղադրիչ: Այդ ձևերի դիզայնի ծավալատարածական լուծումները կարևոր դեր են կատարում միջավայրին ինտեգրման գործում: Դրանում առաձևահատուկ է, որ վերոհիշյալ օբյեկտները չհանդիսանան որպես շենքերի և շինությունների փոքրացված տարբերակներ: Սա է տարածում գտած այն պատճառներից մեկը, որով շենքերի և շինությունների անսամբլներում տեղի են ունենում անհավասարակշռություններ: Նմանատիպ օրինակներ շատ կան քաղաքներում, որտեղ փոքր ճարտարապետական ձևերն անտեղի մրցակցության մեջ են մտնում ավելի մասշտաբային օբյեկտների հետ:

Համաշխարհային պրակտիկայում փոքր ճարտարապետական ձևերի տարբեր մոտեցումներ և օրինակներ կան: Դրանցից կարելի է նշել Սլովենիայում 1970 թ. լայն տարածում գտած «K67» կրպակը, որը կիրառվել է տարբեր ֆունկցիոնալ գործառնություններով [3]:

Փոքր ճարտարապետական ձևերի նախագծման սկզբունքները բազմազան են և դրանց մի մասի վերաբերյալ իրենց աշխատություններում անդրադարձել են Կուլիկովան, Պյատիխը, Չեսնիկովը և այլոք [4, 5]: Լանդշաֆտի և բարեկարգման հիմունքների մասին իր ուսումնասիրություններով հանդես է եկել Բալաշկինան [6]: Փարիզում ճարտարապետ Բ.Շումի իրականացված «Պարկ դե լա Վիլետ» նախագծում հատուկ շեշտադրում է կատարվել ճարտարապետական ձևերի այգում ինտեգրվելու խնդրի վրա [7]:

Ամբողջացնելով հանրության կողմից շրջանառված հրապարակումները և քննարկումները, սույն աշխատությամբ փորձ է արվում առևտրային նշանակության փոքր ճարտարապետական ձևերի դիզայնի համար բացահայտել նոր հնարավորություններ և մեթոդներ:

Հաշվի առնելով ԽՍՀՄ-ի փլուզումից հետո ՀՀ տարածքում առկա մի շարք քաղաքների արդյունաբերական պատմության և գործառնությունների դադարեցումը, հարկ է նշել, որ այդ քաղաքների լանդշաֆտը լի է արդյունաբերական տարբեր մնացորդներով, կառույցներով, որոնք աշխատել են արտադրական ենթակառուցվածքում և տարբեր պատճառներով չեն վերաօգտագործվել: Վերոհիշյալ սարքավորումներից են ցիստեռները, որոնք մեծ մաս են կազմում և սույն հոդվածի ուսումնասիրության արդյունքում դիտարկվում են որպես փոքր ճարտարապետական ձևերում կիրառելի բաղադրիչներ: Ցիստեռներն արդեն իսկ առանձին օբյեկտներ են և չեն առնչվում շենքերի և շինությունների հետ:

Հոդվածի առաջին մասում նկարագրվում են փոքր ճարտարապետական ձևերի օրինակներ ՀՀ տարբեր քաղաքներում և քննարկվում են դրանց ճարտարապետագեղարվեստական խնդիր-

ները: Այնուհետև, երկրորդ մասում ներկայացվում են կրպակների միջազգային օրինակներ և մեթոդներ, որոնց վրա պատկերավոր երևում են փոքր ճարտարապետական ձևերի, որպես առանձին քանդակային օբյեկտ կիրառելու առավելությունները:

Ամբողջացնելով տեղական և միջազգային փորձի հիման վրա արված եզրահանգումները, առաջարկվում են որպես փոքր ճարտարապետական ձևեր վերաօգտագործել ցիստեռները: Չնայած դրանք կարող են լինել տարբեր չափերի և ձևերի, սույն հոդվածում աքսոնոմետրիկ պատկերների միջոցով ներկայացվում է վերաօգտագործման մեկ օրինակ:

Նյութեր և մեթոդներ

Աշխատությունը մշակվել է 2023 թ. փետրվար ամսից իրականացված ուսումնասիրության հիման վրա: Գիտական հրապարակումների, արխիվային նյութերի, լուսանկարչական և չափագրական հետազոտությունների հիման վրա այն մշակվել է վերլուծության, փաստերի համադրման, համեմատությունների և ընդհանրացման գիտական մեթոդներով: Քննարկվել են փոքր ճարտարապետական ձևերի գեղարվեստական առանձնահատկությունները, միտումները և քաղաքային միջավայրում ունեցած ազդեցությունները: Համեմատություններ են իրականացվել միջազգային հարթակներում շրջանառվող փոքր ճարտարապետական ձևերի և տեղական փորձերի միջև, որոնցից հատկանշական է Սլովենիայում արտադրված «K67» մոդուլային ծավալը, որի վերաօգտագործման շնորհիվ այն վերածվել է տարբեր ֆունկցիոնալ նշանակության կրպակների: Փորձ է արվել բացահայտել մոդելավորման մեթոդով արդյունաբերական մնացորդներից փոքր ճարտարապետական ձևերի ստացման հնարավորությունները: Փորձերի արդյունքները ներկայացված են եռաչափ գրաֆիկական պատկերներով:

Արդյունքներ և քննարկում

ՀՀ քաղաքներում կրպակների և փոքր ճարտարապետական ձևերի խնդիրները: Քաղաքային միջավայրում ժամանակի ընթացքում ձևավորվել է պահանջ տարբեր ֆունկցիաների կրպակների՝ պաղպաղակի, սուրճի, մամուլի և այլն, սակայն դրան զուգահեռ ճարտարապետագեղարվեստական առանձնահատկություններն անուշադրության են մատնվել, որոնցով պետք էր ձևերի և հանրային միջավայրի միջև նյութական կապ ստեղծվեր և ինտեգրվեր այդ միջավայրին:

Ընդհանուր առմամբ, փոքր ճարտարապետական ձևերի քանակի կտրուկ աճի հետ մեկտեղ նվազեցին գեղարվեստական չափանիշները: Կրպակները կառուցվեցին նույն սխեմայով, ինչ բնակելի և ոչ բնակելի կառույցներն ու շենքերը: Ինչպես կառույցները՝ կրպակներն ունեն կարկասային համակարգ, պատեր, տանիք, երեսապատում, պատուհան, դուռ և այլ ճարտարապետական էլեմենտներ և չնայած կրպակները շատ ավելի փոքր մասշտաբի են, այնուամենայնիվ, դրանք ընկալվում են որպես կառույց, որն էլ հենց պատճառ է հանդիսանում հանրային տարածքում ինտեգրման խնդիրների: Փոքր ճարտարապետական ձևերի նկատմամբ յուրահատուկ մոտեցումը որպես միջավայրի քանդակային և դեկորատիվ օբյեկտի, նպաստում է շենքերի և շինությունների

կոմպոզիցիոն առանձնահատկությունների և արտահայտչականության բարձրացմանը [8]: Կրպակների՝ որպես շենք կամ կառույց հանդիսանալու փաստը նվազեցնում է շենքերի կարևորությունը և թուլացնում է անսամբլային ամբողջականությունը:

Երևան քաղաքում կրպակների ոճային և գեղարվեստական չափորոշիչներն ամբողջությամբ անկախ են, չեն տեղավորվում որևէ դիզայնի սկզբունքի մեջ: Դրանով կրպակները բացասական ազդեցություն են ունենում ընդհանուր քաղաքային միջավայրի վրա (նկ. 1):



Նկ. 1. Մուրճի և պաղպաղակի կրպակներ Երևան քաղաքում

Միջազգային փորձ: Ի տարբերություն ներկայացված կրպակների, քանդակները կամ տարբեր արվեստի օբյեկտները, անկախ մասշտաբից, կարող են ինտեգրվել և ընկալվել որպես քաղաքային միջավայրի մի մաս:




Նկ. 2. Կրպակների համաշխարհային օրինակներ

Պատճառն այն է, որ նման օբյեկտները գերծ են ճարտարապետական էլեմենտներից և չունեն պատեր, տանիք, կարկասային համակարգ և այլն: Դիտարկենք, որպես փոքր ճարտարապետական ձև, թեյնիկը (նկ. 2): Անկախ թեյնիկի մասշտաբային փոփոխությունից, օբյեկտային և քանդակային ընկալումը մնում է անփոփոխ: Այդպիսով, միջավայրում շենքերի և կառույցների հետ թեյնիկը չի կարող առնչվել, այն միևնույն է կոդիտարկվի որպես դեկորատիվ էլեմենտ: Պատահական չէ, որ փոքր ճարտարապետական ձևերի և դեկորատիվ կիրառական արվեստների փոխադարձ կապը շատ սերտ է: Այստեղից կարելի է անել հետևություն, որ փոքր ձևերի համար տվյալ պարագայում պետք է կիրառել առանձնահատուկ գեղարվեստական լուծումներ և տարանջատել դրանց շենքերից և կառույցներից:

Փոքր ճարտարապետական ձևերին բնորոշ է նաև արագորեն տեղափոխվելու, փոխակերպվելու հնարքները՝ կցումներ, միացումներ և այլն: Հենց դրանով է պայմանավորված ժամանակավոր և դինամիկ կիրառությունները: Օրինակ՝ Սլովենիայում արտադրված «киоск K67»-ը դարձավ հայտնի իր բազմաֆունկցիոնալ, դինամիկ և բջջային առանձնահատկությունների շնորհիվ: Կրպակի հեղինակ Սաշա Մախտիգը ի սկզբանե այն նախագծել էր որպես ավտոկայանատեղիների անցակետ: Անցած դարի 70-ականներին այն լայն տարածում գտավ, վերաօգտագործվելով որպես տարբեր ֆունկցիաների կրպակներ: 1999 թ. դրությամբ կրպակի արտադրանմուշների քանակը հասել էր 7500-ի: Այնուհետև կրպակի հոչակը տարածվեց աշխարհի տարբեր երկրներում՝ Լեհաստան, Ճապոնիա, Նոր Զելանդիա, Իրաք, ԱՄՆ և ԽՍՀՄ: Աշխարհի տարբեր երկրներում կրպակը կիրառվում է առևտրի տարբեր ֆունկցիաներով՝ սուրճ, պաղպաղակ, բանջարեղեն, թերթ և այլն:

Մոդուլի կրկնության շնորհիվ կրպակը կարող էր բազմակի անգամներ մեծանալ, վերածվել գրասենյակի, խանութի, պահեստի (նկ. 3): Ինչպես նկատում ենք, ի սկզբանե այլ նպատակի ծառայող ծավալը վերածվելով տարբեր նշանակության կրպակների, լայն տարածում գտավ, ինչը չի բացառում, որ այլ ծավալներ, մոդուլներ ևս կարող են արժանալ նման ճակատագրի:

Սույն օրինակով, առանձնացնելով կրպակների մոդուլային կառուցվածքի առավելությունները և համադրելով միջազգային և տեղական օրինակների վերլուծության հետ, կարելի է գալ այն եզրահանգման, որ կրպակները պետք է դիտարկվեն որպես առանձին օբյեկտ, քանդակ, բջիջ կամ մոդուլ: Դրանով միջավայրը ձևավորող յուրաքանչյուր օբյեկտ կստանձնի առանձնահատուկ դեր: Որպես կրպակ կարելի է դիտարկել այնպիսի ծավալներ, որոնք ունեն հստակ տիպային կառուցվածք, աղերս չունեն շենքերի և շինությունների հետ և կարող են ենթարկվել տարբեր փոխակերպումների: Նմանատիպ ծավալներ ՀՀ տարածքում կարելի է գտնել երբեմնի գործարաններում, որոնք ԽՍՀՄ փլուզումից հետո դադարեցին գործել և ժառանգեցին մեծ քանակությամբ գույք և սարքավորումներ:



Նկ. 3. «Киоск K67» կրպակի մոդուլի կցման հնավորությունները

Արդյունաբերական ցիստեռնը որպես փոքր ճարտարապետական ձև:

Ուսումնասիրելով ՀՀ արդյունաբերական քաղաքների պատմությունները և ներկայիս իրավիճակը, պարզ է դառնում, որ ԽՍՀՄ փլուզումից հետո արդյունաբերական խոշոր գործարանների, ինչպիսիք են՝ Վանաձորի քիմիական, Հրազդանի «Հրազդանմաշ» գործարանների և այդ թվում նաև այլ քաղաքների արդյունաբերական համալիրների տարածքում կան մի շարք սարքավորումներ, ռեզերվուարներ և ցիստեռններ: Դրանցից առանձնացվել են ցիստեռնները, որոնք սույն աշխատության թեմայի շրջանակում կարևոր նշանակություն ունեն (նկ. 4):



Նկ. 4. Գործարանների տարածքներում կուտակված ցիստեռններ


Ցիստեռնները, որոնց վերաօգտագործման կանխատեսումները անորոշ են, սույն աշխատության շրջանակում, որոշակի տրանսֆորմացիաների ենթարկելով, առաջարկվում է վերաօգտագործել որպես փոքր ճարտարապետական ձևեր: Աշխարհում արդյունաբերական թափոնների նմանատիպ վերաօգտագործման մեթոդները լայն տարածում ունեն [1, 8, 9]: Ցիստեռնները ներքին կառուցվածքով հարմարավետ են կիրառման համար, իսկ գեղարվեստական տեսանկյունից դրանք աղերս չունեն շենքերի և կառույցների հետ: Այսպիսով, վերցնելով ցիստեռնները և նմանատիպ մետաղական էլեմենտները, հնարավոր է ենթարկել որոշակի ձևափոխումների և վերաօգտագործել որպես տարբեր ֆունկցիոնալ նշանակության կրպակներ: Ցիստեռնները դասակարգվում են մի շարք առանձնահատկություններով և տարբերվում են ըստ չափերի, ձևերի, ինչպես նաև, թե ինչ հեղուկների համար են դրանք նախատեսված: Սույն հոդվածի շրջանակում քննարկվում է ընդհանրացված գաղափար, որը տարբեր տեսակի ցիստեռնների համար կարող է որոշակիորեն փոփոխվել: Տվյալ պարագայում, դիտարկելով ցիստեռնը որպես մոդուլ, հնարավոր է կտրման և զոդման միջոցով մի քանի ցիստեռններով ստանալ խոշոր մոդուլ (նկ. 5, 6): Ըստ ֆունկցիոնալ պահանջի կտրելով պատուհաններ և դռներ, այն կվերածվի օգտագործելի ծավալի՝ սենքի, որի մեջ համապատասխան կահույք և սարքավորում տեղադրելով այն կվերածվի տարբեր ֆունկցիաներով կրպակների՝ մամուլի, սուրճի, պաղպաղակի և այլն:

Թեև քննարկվում է ցիստեռնների վերաօգտագործման ընդհանրացված գաղափարը ծավալահատակագծային տեսանկյունից, պետք է նաև հաշվի առնել ջերմամեկուսացման, ջեռուցման և ինժեներական կոմունիկացիաների բաղադրիչները: Դրանք կախված են ցիստեռնների համապատասխան պարամետրերից: Ընդհանուր դեպքերի համար ջերմամեկուսացումը հնարավոր է


իրականացնել պոլիուրետանային փրփուրով: Հարկ է նշել, որ կան ցիստեռներ, որոնք ունեն ջերմամեկուսացման շերտեր: Օրինակ, կաթի տեղափոխման համար նախատեսված թերմոսային ցիստեռներն ի սկզբանե ունեն երկշերտ մետաղական կառուցվածք և դրանց միջև առկա է ջերմամեկուսիչ շերտ, ինչն էլ թույլ կտա ներսում ապահովել մարդու աշխատանքի համար բարենպաստ ջերմային պայմաններ: Ջրի օգտագործումը պետք է իրականացնել նախապես պաշարված ջրի օգտագործման մեթոդով: Էլեկտրաէներգիայի օգտագործումը կարելի է մատակարարել մոտակա էներգիայի աղբյուրներից, իսկ դրանց բացակայության դեպքում՝ վառելիքային գեներատորների միջոցով: Այս պահանջները բավարարելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել կոնկրետ օրինակի ցիստեռնի առանձնահատկությունները և տեղի պայմանները:

Հարդարման համար ցիստեռները կարելի է ներկել, թաղանթապատել կամ կիրառել նմանատիպ այլ մեթոդներ: Հարդարման մեթոդների կիրառումը շատ կարևոր է, և անհրաժեշտ է ի սկզբանե հաշվի առնել կրպակի թեմատիկ, ֆունկցիոնալ և շրջակա միջավայրի էսթետիկ առանձնահատկությունները [10]:

Ցիստեռնի առավելությունն այն է, որ ծավալային առանձնահատկությունները շատ արտահայտիչ են և ճիշտ հարդարման, գույների, պատկերների ընտրության արդյունքում դրանք էլ ավելի կառանձնանան շենքերից և շինություններից:



Նկ. 5. Ցիստեռների օգտագործման տարբերակներ



Նկ. 6. 4 ցիստեռների միավորումից ստացված ծավալի հորիզոնական հատույթները

Եզրակացություն

Ամփոփելով աշխատությունը, հարկ է նշել, որ դիտարկվել է քաղաքային միջավայրում կրպակների ինտեգրման խնդիրը, առաջ քաշելով շենքերի և կրպակների փոխադարձ կապերը միջավայրի ձևավորման մեջ: Հաշվի նստելով փոքր ճարտարապետական ձևերի արտերկրի փորձի հետ, առաջ է քաշվել կրպակների՝ որպես առանձին քանդակային օբյեկտ հանդես գալու գաղափարը: Այսպիսով, կրպակները պետք է տեղադրվեն այգիներում, պուրակներում և այլ հանրային

տարածքներում որպես քանդակներ և արվեստի օբյեկտներ: Սրանով քաղաքում կարող է ավելանալ ճարտարապետական նոր լեզու, որով կրպակները և նման օբյեկտները կինտեգրվեն քաղաքի կյանքին: «Киоск K67»-ի օրինակով քննարկվել են փոքր ճարտարապետական ձևի փոխակերպման և կիրառման լայն հնարավորությունները, ինչից էլ եզրահանգվել է, որ հնարավոր է մշակել համապիտանի մոդուլ և կիրառել այն տարբեր ֆունկցիաներով: ՀՀ տարբեր քաղաքների գործարանների տարածքներում ուսումնասիրվել են մի շարք սարքավորումներ, որոնցից առանձնացվել է ցիստեռնը:

Կատարված ուսումնասիրության ընդհանրացման և փաստերի համադրության շնորհիվ մշակվել է ցիստեռնի՝ փոքր ճարտարապետական ձևերում վերաօգտագործելու ընդհանրացված գաղափար և ներկայացվել է ցիստեռնի փոխակերպման ծավալատարածական հնարավորությունները եռաչափ գրաֆիկական պատկերների և հատույթների միջոցով: Այսպիսով, փոքր ճարտարապետական ձևերում կարելի է կիրառել մեթոդ, ինչով կրպակները, որպես քանդակային և առանձին օբյեկտ, ցիստեռնների մոդուլային կիրառման արդյունքում կինտեգրվեն քաղաքային միջավայրին:

Գրականության ցանկ

- [1] **Н.В. Самойлова**, Малые архитектурные формы: въездной знак. особенности проектирования: уч. пос. Волгоградский ГТУ, Волгоград, 2018, 100 с.
- [2] **R. Ventury, D. Scott Brown, S. Izenour**, Learning from Las Vegas: The forgotten symbolism of architectural form, The MIT Press, Cambridge, Massachusetts, and London, 1977.
- [3] The enduring lives of Sasa Machtig's modular creations. Available online: https://metropolismag.com/profiles/the-enduring-lives-of-sasa-machtigs-modular-creations/?utm_medium=website&utm_source=archdaily.com (accessed 13.04.2023).
- [4] **Н.А.Куликова, А.М. Пятых**, Малые архитектурные формы: уч. пос. ФГБОУ ВО Волгоградский ГАУ, Волгоград, 2018, 92 с.
- [5] **В. Г.Чесников**, Малая архитектурная форма в исторической среде: методические указания к выполнению курсовой работы N4 для студентов 1-го курса направления подготовки 07.03.02 «Реконструкция и реставрация архитектурного наследия». ВГТУ, Воронеж, 2017, 24 с.
- [6] **Е.С.Балашкина**, Внешние благоустройства микрорайона. Стройиздат, Москва, 1964, 174 с.
- [7] **Bernard Tschumi**, Architecture concepts: red is not a colour, Rizzoly, New York, 2012, 776 p.
- [8] **В.Ляпустин**, Архитектурный композитор. TATLIN, Екатеринбург, 2019, 736 с.
- [9] Reuse industrial equipment as art. Available online: <https://techiazi.com/10-techniques-for-reusing-industrial-equipment/> (accessed 13.04.2023).
- [10] **С. Б.Кожевников, Г. А.Ермоленко**, Эстетика городского пространства: от карнавала до стрит-арта. Вестник МГПУ (2019) 9 . DOI 10.25688/2078-9238.2019.30.2.08.

ПРОБЛЕМЫ МАЛЫХ АРХИТЕКТУРНЫХ ФОРМ И ВОЗМОЖНОСТИ ПРИМЕНЕНИЯ ЦИСТЕРН КАК КИОСКОВ

Арно Мкртичевич Багумян^{1*}, Гнел Вагаршакович Егиазарян²

¹Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

²Архитектурная студия “Тарберак”, г. Ереван, РА

*baghumyan.arn@gmail.com

Статья рассматривает проблемы малых архитектурных форм городской среды и киосков. Цель работы является обсуждение и анализ проблем, связанных с малыми архитектурными формами в городской среде и возможности повторного использования промышленных цистерн в качестве малых архитектурных форм. Научными методами сбора, моделирования и обобщения, примененных на основе изучения информации, выполнено исследование малых архитектурных форм, сведений о киосках и цистернах, архивных материалов. В работе представлены возможности повторного использования неиспользуемых и заброшенных цистерн, интеграции их в городскую среду через малые архитектурные формы.

Ключевые слова: малая архитектурная форма, киоск, резервуар, повторное использование, интеграция, городская среда

PROBLEMS OF SMALL ARCHITECTURAL FORMS AND POSSIBILITIES OF USE OF TANKERS AS KIOSKS

Arno Baghumyan^{1*}, Gnel Yeghiazaryan²

¹National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

²“Tarberak” architectural studio, Yerevan, RA

*baghumyan.arn@gmail.com

The article discusses the problems of small architectural forms in the urban environment, kiosks. The aim of the article is to discuss and to analyze the problems related to small architectural forms in the urban environment and the possibility of reuse of industrial cisterns as small architectural forms. The article is developed by scientific methods of collecting, modeling and generalizing, applied on the basis of studying information about small architectural forms, information about kiosks and cisterns, archival materials. The paper presents the opportunities of reuse of unused and abandoned cisterns by integrating them into the urban environment through small architectural forms.

Keywords: Small architectural forms, kiosk, reservoir, reuse, integration, urban environment

Բաղումյան Առնո Մկրտչի (ՀՀ, ք.Երևան) - ՃՇՀԱՀ, Ճարտարապետական նախագծման և Ճարտարապետական միջավայրի դիզայնի ամբիոն, մագիստրոս, (+374)44474471, baghumyan.arn@gmail.com, **Եղիազարյան Գնել Վաղարշակի** (ՀՀ, ք.Երևան) – «Տարբերակ» Ճարտարապետական ստուդիա, Ճարտարապետ, (+374)77955974, gneleghiazaryan@gmail.com.

Багумян Арно Мкртичевич (РА, г. Ереван) - НУАСА, кафедра Архитектурного проектирования и дизайна архитектурной среды, магистр, (+374)44474471, baghumyan.arn@gmail.com, **Егиазарян Гнел Вагаршакович** (РА, г. Ереван) - Архитектурная студия “Тарберак”, архитектор, (+374)77955974, gneleghiazaryan@gmail.com

Baghumyan Arno (RA, Yerevan) - NUACA, Chair of Architectural Drafting and Design of Architectural Environment, Master (+374)44474471, baghumyan.arn@gmail.com, **Yeghiazaryan Gnel** (RA, Yerevan) - “Tarberak” architectural studio, architect, (+374)77955974, gneleghiazaryan@gmail.com.

Ներկայացվել է՝ 28.04.2023թ.

Գրախոսվել է՝ 03.05.2023թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.08.2023թ.

ՔԱՐԱՆՃԱՎՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՀՀ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

Սմբատ Ռուբիկի Դավթյան՝ Մերի Վարդանի Վարդանյան, Նարինե Սամվելի Միմոնյան,

Անահիտ Լաերտի Արամյան

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան, ք. Երևան, ՀՀ

srdavtyan@mail.ru

Հոդվածում քննարկվում է քարանձավների՝ զբոսաշրջության տարբեր ուղղություններում (տեսակներում) օգտագործելու հիմնախնդիրը ՀՀ-ում: Ներկայումս այդ հսկայածավալ և ինքնատիպ ռեսուրսը չափազանց փոքր դեր է խաղում հայկական զբոսաշրջային պրոդուկտ ձևավորելու գործում: Պատճառներից մեկը՝ քարանձավների վերաբերյալ համապատասխան ինֆորմացիայի բացակայությունն է: Հոդվածում ներկայացվող դրույթները կարող են օգտակար լինել զբոսաշրջային ոլորտի կառավարիչների և քարանձավային զբոսաշրջության ոլորտում ներդրումներ իրականացնողների համար:

Բանալի բառեր. արկածային զբոսաշրջություն, ճանաչողական-կրթական զբոսաշրջություն, կրոնական-ճանաչողական զբոսաշրջություն, մշակութային զբոսաշրջություն, էքսկուրսիոն քարանձավ

Ներածություն

Քարանձավները՝ (բնական և արհեստական ծագում ունեցող ստորգետնյա դատարկությունները, տարածությունները, խոռոչները) օգտագործվում են տարբեր նպատակներով. հասարակական կյանքի տարբեր բնագավառներում գրանցվել է դրանց օգտագործման մոտ 130 ուղղություն [1]: Բազմաթիվ երկրներում դրանք լայնորեն օգտագործվում են որպես զբոսաշրջային օբյեկտներ [2]: Այսօր հազարավոր էքսկուրսիոն քարանձավներ դարձել են ամենաայցելվող զբոսաշրջային վայրեր: Այսպես, 2021 թ. աշխարհի էքսկուրսիոն քարանձավներ են այցելել 120,8 մլն զբոսաշրջիկ, ովքեր ապահովել են 2,06 մլրդ ԱՄՆ դոլար եկամուտ [3], այսինքն յուրաքանչյուր զբոսաշրջիկ քարանձավ մուտք գործելու համար վճարել է միջին հաշվով 17 ԱՄՆ դոլար:

ՀՀ տարածքում առկա տասնյակ քարանձավներ ոչ միայն երկրի տնտեսության համար եկամտի կարևոր աղբյուր կարող են հանդիսանալ, այլև աշխատանքով ապահովել հարյուրավոր մարդկանց, միաժամանակ նպաստելով դրանցում պատշաճ սանիտարական-էկոլոգիական վիճակի պահպանմանը: Դրանք զբոսաշրջության տարբեր ուղղությունների (տեսակների) զարգացման համար լավագույն հիմք են հանդիսանում: Դրանցում կարող են իրականացվել ճանաչողական-մշակութային և արկածային ուղղվածություն ունեցող տուրեր, իսկ գիտական, գեղագիտական ու պատմահնագիտական մեծ պոտենցիալով քարանձավները հիմք են հանդիսանում էքսկուրսիոն քարանձավների ստեղծման համար: ՀՀ Կառավարության կողմից 2015 թ. ընդունված

ծրագիրը [4] կարող է խթանել քարանձավային զբոսաշրջության զարգացմանը, եթե այն ունենա շարունակական բնույթ և նոր ռեսուրսներ ընդգրկվեն ոլորտում: Այդ նպատակի համար ստորև ներկայացվում են քարանձավային տուրիզմի զարգացման առաջնակարգ ուղղությունները և օբյեկտները:

Նյութեր և մեթոդներ

1980-ական թթ. կեսերից սկսած ՀՀ տարածքում ուսումնասիրվում են քարանձավները՝ դրանց գիտական, գեղագիտական և տնտեսական արժեքը բացահայտելու նպատակով [5]: Դրա արդյունքում ստեղծվել է արխիվային ֆոնդ, որտեղ ներկայացված են տվյալներ մի քանի հազար ստորգետնյա տարածությունների վերաբերյալ: Հայ մասնագետների հետազոտությունները ներկայացվել են միջազգային կոնֆերանսներում, սիմպոզիումներում [6]: Հայաստանի քարանձավային հարուստ ժառանգության մասին են վկայում նաև օտարերկրյա մասնագետների հետ իրականացված հետազոտությունները [7]: Վերոհիշյալ նյութերի վերլուծությունը և մեր կողմից իրականացված դաշտային հետազոտությունները ցույց են տվել, որ մի քանի տասնյակ բնական և արհեստական խոռոչներ կարող են օգտագործվել և նպաստել քարանձավային զբոսաշրջության զարգացմանը:

Միաժամանակ անհրաժեշտ է նշել, որ ոչ մասնագիտական գրականության մեջ բոլոր տեսակի ստորգետնյա դատարկություններն (խոռոչները) անվանվում են քարանձավներ, մինչդեռ քարանձավը դրանց միայն մի տեսակն է: Ձևաբանական մյուս տեսակներն են ժայռածածկերը, քարայրները և հորերը: Բոլոր այդ խոռոչները միմյանցից տարբերվում են երկարությամբ, բարձրությամբ, լայնությամբ և դրանց միջև եղած հարաբերակցությամբ:

1. Ժայռածածկերն ընկած են քարափների ստորին մասերում, բաղկացած են մեկ ձևաբանական տարրից և աչքի են ընկնում փոքր երկարությամբ և համեմատաբար մեծ լայնությամբ ու բարձրությամբ: Այստեղ խոռոչի երկարությունը փոքր է բարձրությունից և լայնությունից, իսկ լայնությունը մեծ է բարձրությունից: Սովորաբար դրանց երկարությունը չի անցնում մի քանի մետրից, իսկ բարձրությունը և լայնությունը՝ մի քանի տասնյակ մետրերից:

2. Քարայրները նույնպես հորիզոնական հատակ ունեցող դատարկություններ են: Դրանք սովորաբար մեկ դահլիճից կազմված ստորգետնյա խոռոչներ են և ունեն առավելագույնը մի քանի տասնյակ մետր երկարություն ու լայնություն և մի քանի մետր բարձրություն:

3. Քարանձավները հիմնականում հորիզոնական հատակ ունեցող խոշոր դատարկություններ են, որոնք երկրի մակերևույթի հետ կապված են մեկ կամ մի քանի մուտքերով: Դրանք ստորգետնյա մեծ համալիրներ են, որոնք կազմված են խոշոր չափեր ունեցող դահլիճներից և դրանք իրար հետ կապող նեղ անցուղիներից (միջանցքներից): Այստեղ խոռոչի երկարությունը բազմապատիկ անգամներ երկար է դրանց բարձրությունից և լայնությունից: Քարանձավների երկարությունը սովորաբար անցնում է մի քանի տասնյակ մետրից և հասնում է կիլոմետրերի:

4. Հորերը մինչև մի քանի տասնյակ մետր խորություն (առավելագույնը՝ 40...50 մ) ունեցող ուղղահայաց կամ հատակի մեծ թեքություն ունեցող խոռոչներ են՝ ստորին մասում ընդլայնումով կամ առանց ընդլայնման: Դրանք ունեն քարափավոր լանջեր և շրջանաձև հատակագծեր՝ մի քանի տասնյակ սանտիմետրից մինչև մի քանի մետր տրամագծով: Երբեմն 20 մ-ից ավելի խորություն ունեցող հորերն անվանում են վիհեր:

Ծագումնաբանական առումով առանձնացվում են ստորգետնյա դատարկությունների (խոռոչներ) հետևյալ տեսակները՝ կարստային, կլաստոկարստային, հրաբխային, սուֆոզիոն և արհեստական:

1. Կարստային խոռոչների առաջացման համար անհրաժեշտ են երեք պարտադիր պայմաններ՝ կարստացվող (հիմնականում՝ կարբոնատային) ապարներ, դրանցում ճեղքերի առկայություն և շրջանառվող ջուր: Վերջինս, շարժվելով կարբոնատային ապարների ճեղքերով, լուծում է դրանք, ձևավորելով տարբեր չափերի և ձևերի խոռոչներ: ՀՀ-ում այդ խոռոչները ձևավորվել են հիմնականում պերմի, յուրայի, կավճի և էոցենի հասակի կրաքարերում [8]: Հաճախ դրանք «գարդարված են» տարբեր ձև, չափեր և գունավորում ունեցող կարստային առաջացումներով՝ ստալակտիտներով, ստալագմիտներով, ստալագնատներով, վարագույրներով, կորալներով և այլն: Կարստային խոռոչները տարածված են Սյունիքի, Վայոց ձորի, Արարատի, Տավուշի և Լոռու մարզերում [9]:

2. Կլաստոկարստային խոռոչները ձևավորվում են հիմնականում կրաքարային կոնգլոմերատներում: Կոնգլոմերատներն իրար կապակցող կրաքարային ցեմենտը ջրի ազդեցության հետևանքով լուծվում է, որի արդյունքում կոնգլոմերատը վեր է ածվում խոռոչի հատակում կուտակված տարբեր չափեր ունեցող գլաքարերի շեղջերի: Վերջիններիս էլ խոռոչից դուրս են բերում ջրային հոսքերը. որքան հզոր և առատ է ջրային շիթը, այնքան շատ է դուրս բերվող նյութը, թույլ ջրհոսքերի դեպքում քարանձավում կուտակված գլաքարերը սովորաբար տեղապտույտ են գործում քարանձավի ներսում՝ չլքելով այդ տարածքները: Կլաստոկարստային խոռոչները տարածված են Վայոց ձորի մարզում [10]:

3. Հրաբխային խոռոչները ներկայացված են պլիոցեն-չորրորդական ժամանակաշրջանի անդեզիտաբազալտային հոսքերում ձևավորված դատարկություններով, որոնք հանդես են գալիս երկու ենթատեսակով՝ լավային-կոնտակտային քարայրներով և լավային թունել-քարանձավներով: Լավային-կոնտակտային քարայրները տեղադրված են գետերի հովիտների ու կիրճերի գառիթափ և ուղղաձիգ լանջերին ու ձևավորվում են հարևան լավային հոսքերի կոնտակտային գոտիների մեջ: Դրանց առաջացումը տեղի է ունենում կոնտակտային գոտիներից խարամային նյութի հեռացման հետևանքով: Հետագայում այդ խոռոչների մի մասը մարդու կողմից որոշակի ձևափոխումներից հետո օգտագործվել է տարբեր նպատակների (բնակարան, տնտեսական և օժանդակ շինություններ) համար: Դրանց մեծամասնությունն ունի ոչ մեծ չափեր (երկարությունը և լայնությունը՝ մինչև 20 մ), ոչ բարձր (բարձրությունը՝ մինչև 5 մ) առաստաղ, որը մեղմաթեք

իջնում է դեպի խոռոչի եզրերը [11]: Լավային թունելներն առաջանում են լավային հոսքի անհավասարաչափ սառեցման հետևանքով, երբ սառած կեղևի տակից արտահոսում է դեռևս հեղուկ լավան: ՀՀ-ում այդպիսի քարանձավների երկարությունը հասնում է 100...120 մ-ի: Հրաբխային խոռոչները տարածված են ՀՀ բոլոր մարզերում:

4. Սուֆոզիոն քարայրները ձևավորվում են տուֆերում և տուֆածին բեկորային ապարներում (հատկապես հրաբխածին-նստվածքային ապարներում): Այդ ապարները կազմված են հրաբխային մոխրով ցեմենտացած հրաբխային և նստվածքային ապարների տարբեր չափերի բեկորներից: Սուֆոզիայի արդյունքում տեղի է ունենում հրաբխային մոխրի մանրագույն մասնիկների տեղատարում, որը նպաստում է ապարների ամրության թուլացմանը: Այնուհետև այդ ապարները ջրի և քամու կողմից տեղատարվում են՝ ձևավորելով տարբեր մեծության խոռոչներ: Դրանք տարածված են Սյունիքի, Արարատի, Կոտայքի, Արագածոտնի, Լոռու, Վայոց ձորի մարզերում [12]:

5. Արհեստական քարայրները ստեղծվում կամ ձևավորվում են մարդու աշխատանքի արդյունքում: Դրանց թվին են դասվում նաև բնական ծագում ունեցող այն խոռոչները, որոնք ծավալային և կառուցվածքային զգալի փոփոխությունների են ենթարկվել մարդկանց կողմից: Արհեստական քարայրները ստեղծվում են որոշակի նպատակով և ունեն իրենց բնորոշ ճարտարապետական-կառուցվածքային առանձնահատկությունները: Դրանք ստորաբաժանվում են երկու ենթատեսակների՝ Ժայռափոր (վիմափոր) կառույցների և ստորգետնյա շինությունների: Ժայռափոր կառույցները տեղադրված են տարբեր ապարներում՝ տուֆերում, բազալտներում, տրավերտիններում, կրաքարերում, փուխր գրունտներում և այլն: Այդպիսի խոռոչներ (ծավալներ) ստանալու համար օգտագործվել են տարբեր գործիքներ և տեխնոլոգիաներ: Ստորգետնյա շինությունները վերգետնյա կառույցների նման ունեն միևնույն կոնստրուկտիվ տարրերը՝ հատակ, պատեր, առաստաղ: Որպես շինանյութ օգտագործվել է քարը, որպես ցեմենտացնող նյութ՝ կրաշաղախը: Ստորգետնյա շինությունները կամ սկզբնապես այդպես են կառուցվել, կամ էլ հետագայում այդպիսին են դարձել նախապես վերգետնյա տարրերակով կառուցված շինությունները՝ հետագա կառուցապատումների կամ լանդշաֆտի փոփոխության արդյունքում: Ժայռափոր (վիմափոր) կառույցները և ստորգետնյա շինությունները տարածված են ՀՀ բոլոր մարզերում:

ՀՀ տարածքի ստորգետնյա խոռոչների բազմաքանակությունը և բազմազանությունը թույլ է տալիս դրանք օգտագործել զբոսաշրջության տարբեր ոլորտներում [13]:

Արդյունքներ և քննարկում

Քարանձավների օգտագործման հիմնական ուղղությունները ՀՀ զբոսաշրջության ոլորտում

Կապված քարանձավների ձևաչափական առանձնահատկությունների (չափեր, ծավալ), բնական պայմանների (միկրոկլիմա, կենդանական աշխարհի առկայություն), աշխարհագրական դիրքի (հեռավորությունը ճանապարհներից և տուրիստական արահետներից) հետ՝ ՀՀ ստորգետնյա խոռոչները զբոսաշրջության ոլորտում կարևոր դեստինացիայի դերի են հավակնում: Երկրի

տարածքով մեկ քարանձավների սփռվածությունը թույլ է տալիս դրանք ընդգրկել տարբեր ուղղվածություն ունեցող զբոսաշրջային տուրերի մեջ՝ բազմազանություն մտցնելով իրականացվող էքսկուրսիաներում: Ներկայումս դրանք օգտագործվում են հետևյալ ուղղություններով՝ արկածային, ճանաչողական-կրթական, կրոնական-ճանաչողական, մշակութային:

Արկածային զբոսաշրջություն: Արկածային զբոսաշրջության օբյեկտներ են հանդիսանում կարստային և կլաստոկարստային քարանձավները և հորերը (վիհերը): Նեղ անցումների, օղի բարձր հարաբերական խոնավության և ցածր ջերմաստիճանների պատճառով արկածային քարանձավային զբոսաշրջությունը դիտվում է որպես զբոսաշրջության սպորտային և էքստրեմալ տեսակ: Դրանց առանձին հատվածներում անցուդարձ հնարավոր է իրականացնել ալպինիստական հնարքների և օժանդակ սարքավորումների կիրառումով: ՀՀ-ում այդպիսի օբյեկտներ են Արջերի, Մագելանի քարանձավները, Այծերի, Անակնկալ վիհերը (Վայոց ձոր), Դողդնաձակ քարանձավը (Սյունիք), Մակարի քարանձավը, Խոր հոր, Աղավնու հոր հորերը (Արարատ), Ջրնգան, Վեց փերիներ (Տավուշ) վիհերը: Զբոսաշրջության այս տեսակով հիմնականում զբաղվում են ֆիզիկական պատրաստվածություն ունեցող անձինք:

Ճանաչողական-կրթական զբոսաշրջություն: Զբոսաշրջության այս տեսակի համար ՀՀ-ում առկա են հարյուրավոր հասանելի օբյեկտներ՝ ժայռածածկեր, քարայրներ և քարանձավներ: Դրանց միջոցով տարիքային տարբեր խմբերի և կրթական տարբեր մակարդակ ունեցող այցելուները կարող են ծանոթանալ երկրի ընդերքում ձևավորված խոռոչների առաջացման և բնակեցման պատմության հետ: Ներկայումս գործում են նման մի քանի վայրեր՝ Արենի-1 («Ծակուտ քար») քարանձավ-հնավայրը, Մանահինի լավային թունելը («Մենձ Էր»), Զարնի-Պարնի քարայրային համալիրը: Այս ոլորտում օգտագործվող ստորգետնյա խոռոչները յուրօրինակ երկրաբանական լաբորատորիաներ են՝ ինքնատիպ կլիմայական պայմաններով և կենդանական աշխարհով: Հայաստանի տարածքում ապաստանած մոտ 30 տեսակի չղջիկների մեծ մասը հանդիպում է այս քարանձավներում: Հատկապես բազմազան է Մագելանի, Արջերի, Կարմիր (Վայոց ձոր) քարանձավների կենդանական աշխարհը: Այս տեսակի ճանապարհորդությունները հատկապես կարևոր նշանակություն ունեն դպրոցական տարիքի երեխաների համար, քանի որ քարանձավներում կարելի է ուսումնասիրել բազմաթիվ թեմաներ՝ կապված ֆիզիկայի, քիմիայի, աշխարհագրության, կենսաբանության և այլ առարկաների հետ: Այդ հանգամանքն էլ կարող է նպաստել վաղ տարիքից աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը, հայրենաճանաչողությանը, էկոլոգությանը և այլն:

Կրոնական-ճանաչողական զբոսաշրջություն: Զբոսաշրջության այս տեսակի համար ՀՀ-ում առկա են մոտ մեկ տասնյակ բարձրակարգ օբյեկտներ՝ ժայռափոր մատուռներ, վանքեր, առաջին քրիստոնյաների հավաքատեղիներ, ճգնարաններ և այլն: Սակայն ներկայումս դրանցից միայն Գեղարդավանքն (Այրիվանք) է գործում. այն Հայ Առաքելական եկեղեցու սեփականությունն է հանդիսանում: Այստեղ հավատացյալները և զբոսաշրջիկները ծանոթանում են վանքի պատմա-

կան և մշակութային արժեքներին, այցելում են ժամերգության, մասնակցում են կրոնական տարբեր միջոցառումների: Մարտիրոսի Մբ Աստվածածին ժայռափոր վանքը, Երերույքի տարածքում գտնվող առաջին քրիստոնյաների հավաքատեղի-քարանձավները, Գեղարդաձորի, Խոսրովի արգելոցի, Զովքի (Կոտայք) ժայռափոր ճգնարաններն օգտագործվում են միայն տեղացիների և տարածքը ճանաչողների կողմից՝ հիմնականում կրոնական տոների օրերին:

Մշակութային զբոսաշրջություն: ՀՀ-ում մշակութային զբոսաշրջության օբյեկտները բաժանվում են երկու խմբի՝ ժայռափոր (վիմափոր) կառույցներ և ժայռանկարչության: Ժայռափոր կառույցները, որոնք հիմնականում պաշտամունքային են, թույլ են տալիս ներկայացնել հայկական ժայռափոր մշակույթի մոտ երեք հազարամյա պատմությունը: Սկսած ուրարտական ժամանակներից մինչև ուշ միջնադար ստեղծվել են բարձրարժեք վիմափոր կառույցներ՝ ջրանցքներ, եկեղեցիներ, մատուռներ, բնակարաններ և այլն: Այդպիսի օբյեկտներ են Երևանի ուրարտական ջրանցքների (Դավա, Ումեշինի) թունելային հատվածները, ՀՀ ողջ տարածքով սփռված վիմափոր եկեղեցիներն ու մատուռները (Գեղարդաձորի մատուռներ և եկեղեցիներ), ժայռափոր բնակավայրերը (Դառաբավոր, Հին Գորիս, Հին Խնձորեսկ, Ողջաբերդ, Սպիտակի վիմափոր բնակավայր): Ժայռանկարչության օբյեկտները համեմատաբար քիչ են (Քասաղի կիրճի քարանձավներ, Կաքավաձորի ժայռածածկ, Եղեգնաձորի տարածաշրջանի Գանձակ գյուղատեղիի քարայր), սակայն մեծ հետաքրքրություն են ներկայացնում այցելուների համար:

Քարանձավների ընդգրկումով զբոսաշրջության հեռանկարային տեսակներից են հանդիսանում հետևյալները՝ անձավաբուժությունը, անձավահնագիտական և անձավահնէաբանական տուրիզմը: Առաջարկվում է մի շարք քարանձավներ օգտագործել այդ նպատակների համար:

Անձավաբուժությունը կիրառվում է այն քարանձավներում, որտեղ բուժական գործոններ են հանդիսանում խոնավ օդի իոնացումը, դրա թարմացնող ազդեցությունը, բացարձակ մաքրությունը և համարյա անփոփոխ ջերմաստիճանը: Նման պայմաններ կարող են ապահովել Արջերի և Մոզրովի քարանձավների ստորին դահլիճները:

Անձավահնագիտական տուրիզմը ՀՀ-ում ունի լայն հեռանկարներ: Վերջին տարիներին հայ և օտար մասնագետների իրականացրած պեղումները վկայում են ՀՀ քարայրների և քարանձավների (Երևան-1, Արենի-1, Արենի-2, Ադիտու-3 և այլն) հնագիտական մեծ ներուժի մասին: Քարի դարից մինչև ուշ միջնադարով թվագրված գտածոները վկայում են դրանց կարևոր գիտական նշանակության մասին: Այդ առումով կարևորվում է զբոսաշրջիկների ընդգրկումը հնագիտական աշխատանքներին:

Անձավահնէաբանական տուրիզմի համար կարևոր օբյեկտներ են հանդիսանում հիմնականում դժվարամատչելի քարանձավներն ու քարայրները, որտեղ կենդանիները կարողացել են պատսպարվել կամ երկարատև ապաստան գտնել: Մինչև օրս անձավահնէաբանական հատուկ ուսումնասիրություններ չեն անցկացվել, սակայն հատուկ նշանակություն ունեցող գտածոները վկայում են ՀՀ քարանձավների և քարայրների կարևոր հնէաբանական արժեքի մասին:

Զբոսաշրջային քարանձավների ստեղծումը ՀՀ-ում որպես քարանձավային տուրիզմի զարգացման առաջնահերթ ուղղություն

Աշխարհի շատ երկրներում վերջին տասնամյակներին կարևորվում է քարանձավային զբոսաշրջային օբյեկտների (show cave) ստեղծումը՝ բնական կամ արհեստական քարանձավների բարեկարգման և ինժեներային սարքավորման ճանապարհով: Այդ քարանձավներում այցելություններն անվտանգ կարգով ուղեկցվում են գիդ-էքսկուրսավարների միջոցով: Էքսկուրսիաների ընթացքում ներկայացվում է քարանձավի պատմությունը, երկրաբանությունը, կենդանական աշխարհը, կլիմայական առանձնահատկությունները, քարանձավի հետ կապված լեգենդները, հետաքրքիր պատմությունները և այլն:

Հաշվի առնելով ՀՀ տարածքում քարանձավների բազմազանությունը, ՀՀ Կառավարությունը 2015 թ. դեկտեմբերի 10-ի նիստի N^o 54 արձանագրային որոշման 30-րդ կետով ընդունել է «Զբոսաշրջության նպատակով քարանձավների արդյունավետ օգտագործումն ապահովող միջոցառումների» ծրագիրը: Ըստ այդ ծրագրի նախատեսվում էր ոչ պետական կազմակերպություններին վարձակալությամբ տրամադրել Վայոց ձորի մարզի Մագելանի, Արենի-1, Մոզրովի, Արջերի և Արագածոտնի մարզի քարե դռնավոր քարանձավները՝ դրանց հենքի վրա էքսկուրսիոն քարանձավներ ստեղծելու նպատակով: Ներկայումս գործում է միայն Արենի-1 քարանձավը, մյուսներում հետազոտական, բարեկարգման և կահավորման աշխատանքները շարունակվում են:

Դեռևս ամբողջությամբ չեն բացահայտված Գեղարդաձորի Ժայռափոր քարայրների, Վայոց ձորի կարստային և կլաստոկարստային քարանձավների, Լոռվա և Սյունիքի քարանձավային բնակավայրերի, Արագածոտնի քարե դռնավոր քարանձավների զբոսաշրջային պոտենցիալը: Դրանց ընդգրկումը զբոսաշրջային տուրերում կամ դրանց հիմքի վրա ստեղծված էքսկուրսիոն քարանձավները թույլ կտան բացահայտելու ՀՀ քարանձավների ինքնատիպ աշխարհը:

ՀՀ էքսկուրսիոն քարանձավներից շատերի առանձին դահլիճները կամ ապագայում շրջանառության մեջ դրվող նոր քարանձավները կարող են օգտագործվել նաև այլ ձևերով՝ որպես գիտական և ուսումնական կենտրոններ (կլիմայական, կենդանաբանական, երկրաբանական, սելսմիկ դիտարկումների կենտրոն), գինու, լիկյորի, գարեջրի համտեսի վայր, պարասրահ (համերգասրահ, կինոթատրոն), ամուսնությունների գրանցման գրասենյակ, ատրակցիոն, թանգարան (անձավագիտական, երկրաբանական, լեռնային գործի, հնէաբանական) և այլն: Հատկապես մեծ է գինու համտեսի վայր (սպելեոէնոտեկ) և քարանձավային թանգարան ստեղծելու պոտենցիալ ունեցող խոռոչների քանակը:

Սպելեոէնոտեկների ստեղծում: Խաղողագործության և գինեգործության հնագույն հայրենիք համարվող Վայոց ձորում հայտնի են մոտ մեկ տասնյակ քարանձավներ և քարայրներ, որոնք կարող են ծառայել տեղում ստացած գինու պահեստավորման և համտեսի համար նախատեսված վայրեր: Այդ քարանձավներում ջերմաստիճանը և խոնավությունը հաստատուն են, որի հետևանք

քով դրանք գինու ավանդական պահպանության (կարասների մեջ) լավագույն վայրերն են հանդիսանում: Նման վայրեր կարող են ծառայել նաև Տավուշի և Լոռու մարզերի մի շարք քարանձավներ և քարայրներ [14]:

Քարանձավային թանգարանների ստեղծում: ՀՀ շատ քարանձավներում պեղված նյութը ամբողջությամբ չի ցուցադրվում որևէ թանգարանում: Քարանձավների պեղման արդյունքում հայտնաբերված արտեֆակտների մեծ մասը հնարավորության դեպքում պետք է ցուցադրվի անմիջապես քարանձավում կամ դրա անմիջական հարևանությամբ գտնվող այցելուների կենտրոնում: Քարանձավի աստիճանական թանգարանացումը թույլ կտա այն վերածել ստորգետնյա ինքնատիպ թանգարանի, որի ցուցանմուշներ են դառնալու քարանձավում ապրած մարդկանց կենցաղի, քարանձավի և հարևան տարածքների կենդանական և բուսական աշխարհի մասին վկայող գտածոները: Նման ռեսուրս ունեն ՀՀ տարածքում գտնվող համարյա բոլոր խոռոչները, հատկապես Հրազդանի, Դեբեդի, Չորագետի, Ախուրյանի, Ազատի, Արփայի և Որոտանի հովիտների քարանձավները և քարայրները: Համապատասխան ենթակառուցվածքների առկայության դեպքում դրանք կարող են հանդիսանալ հնագիտական կամ երկրաբանական զբոսայգիների բաղկացուցիչ մաս:

Եզրակացություն

ՀՀ տարածքում իրականացված անձավագիտական աշխատանքները ցույց են տվել, որ երկրում առկա տարբեր ծագում, չափեր և ձևաբանություն ունեցող ստորգետնյա դատարկությունները կարող են լավագույն հիմք հանդիսանալ քարանձավային զբոսաշրջության առանձին ուղղությունների զարգացման համար: Հաշվի առելով ՀՀ-ում առկա ստորգետնյա խոռոչների բազմաքանակությունը և բազմազանությունը, առաջարկվում է դրանք օգտագործել զբոսաշրջության տարբեր ոլորտներում: Ներկայումս այդպիսի ուղղություններ (տեսակներ) են՝ արկածային, ճանաչողական-կրթական, կրոնական-ճանաչողական և մշակութային զբոսաշրջությունները: Առաջարկվում է հեռանկարում դրանք ընդգրկել նաև այլ ուղղություններում՝ անձավաբուժություն, անձավահնագիտություն, անձավահնաբանություն: Առանձին խնդիր է նաև էքսկուրսիոն քարանձավների ցանցի ստեղծումը ՀՀ ողջ տարածքում: Բացի բուն նպատակից, էքսկուրսիոն քարանձավների առանձին սրահներ կամ առանձին քարանձավներ (քարայրներ) կարող են օգտագործվել նաև որպես գինու համտեսի վայրեր, թանգարաններ և այլն:

Հետազոտությունն իրականացվել է ԲՊՀ ֆինանսական աջակցությամբ՝ № 2ԳՀ-22/0011 ծածկագրով հայտի շրջանակում:

Գրականության ցանկ

- [1] **В.Н. Дублянский, Г.Н. Дублянская, И.А. Лавров**, Классификация, использование и охрана подземных пространств, Екатеринбург, УрО РАН, 2001.
- [10] **В.Л. Шамян**, Разработка технологии глубокой очистки сточных вод предприятий хлопчатобумажной промышленности. Автореферат дисс. на соиск. уч.ст. канд.техн.наук. - Москва, 2000, С.15-17. <https://www.dissercat.com/content/razrabotka-tekhnologii-glubokoi-ochistki-stochnykh-vod-predpriyatii-khlopchatobumazhnoi-prom>.
- [11] **Е.А. Урецкий, Л.Д. Субботкин, В.В. Мороз**, Опыт повторного использования сточных вод на предприятии приборо и машиностроения. Строительство и техногенная безопасность. Научно-технический журнал по строительству и архитектуре 11(63) (2018) 98-103. <https://cyberleninka.ru/article/n/opyt-povtornogo-ispolzovaniya-stochnykh-vod-na-predpriyatii-priboro-i-mashinostroeniya/viewer>.
- [12] **СНиП 32.13330.2018**. Наружные сети и сооружения. Минстрой РФ, Москва, 2018. – 72 с. <https://docs.cntd.ru/document/554820821>.
- [13] **Л.П. Сидорова**, Методы очистки промышленных и сточных вод. Часть I. УрФУ, 2012. - 134 с. https://study.urfu.ru/Aid/Publication/11787/1/Sidorova_i_dr.pdf.
- [14] **Н.А.Залетова, Ю.В. Воронов**, Новые технологии для решения современных задач очистки сточных вод. Технология строительных процессов. Механизмы и оборудование. Вестник МГСУ 2 (2012) 109-111. <http://vestnikmgsu.ru/ru/component/sjarchive/issue/article.display/2012/2/109-111>.
- [15] **Nimish Shah, Ankur H. Dwivedi, Shibu G. Pillai**. Processes for the Treatment of Industrial Wastewater. Advanced Materials and Technologies for Wastewater Treatment (2021) 285-316. <https://www.taylorfrancis.com/chapters/edit/10.1201/9781003138303-13/processes-treatment-industrial-wastewater-nimish-shah-ankur-dwivedi-shibu-pillai?context=ubx&refId=59a8f40e-0190-4f4c-9db6-a750c0b434f5>.

- [16] **M.A.H. Shibly, T.A. Tamanna**, Efficient water utilization in knit dyeing factory of Bangladesh. Journal of Textile Engineering & Fashion Technology 6(3) (2020) 71–75. DOI: 10.15406/jteft.2020.06.00232, <https://medcraveonline.com/JTEFT/JTEFT-06-00232.pdf>.
- [17] **M. Racar, D. Dolar, M. Farkaš, N. Milčić, A. Špehar, K. Košutić**, Rendering plant wastewater reclamation by coagulation, sand filtration, and ultrafiltration. Chemosphere 227 (2019) 207–215. <https://www.sciencedirect.com/science/article/abs/pii/S0045653519306927?via%3Dihub>.
- [18] **C. Visvanathan, Roger Ben Aim**, Water, Wastewater, and Sludge Filtration. 2020. 296 p. <https://doi.org/10.1201/9781003068655>.
- [19] **А.Г. Гудков**, Механическая очистка сточных вод: Учебное пособие. ВаГТУ, Вологда, 2003.- С. 74.

ՏՐԻԿՈՏԱԺԻ ԱՐՏԱՂՈՒԹՅԱՆ ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ԽՈՐԸ ՄԱՔՐՈՒՄԸ ՃՆՇՈՒՄԱՅԻՆ ՖԼՈՏԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ

Վարուժան Լևոնի Շամյան*, Արմենուհի Մերյոժայի Մինասյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

**armsham_05@yahoo.com*

Հոդվածում առաջարկվում է տրիկոտաժի արտադրությունից կեղտաջրերի խորը մաքրման տեխնոլոգիական սխեմա, ինչպես առանձին ընդհանուր արտաթողման կեղտաջրի համար, այնպես էլ համակցված հոսքերի սկզբունքի համաձայն, երբ երկու կամ ավելի արտադրական գործընթացներից կեղտաջրերը ուղարկվում են մեկ հոսք: Այս մոտեցումը թույլ է տալիս արդեն ընտրված տեխնոլոգիական գործընթացներից ուղղորդվող կեղտաջրերի միջինացման փուլում ստանալ հիմնական աղտոտիչների նվազագույն կոնցենտրացիաներ տվյալ խառնուրդային հոսքում և դրանով իսկ ապահովել դրանց արդյունավետ մաքրումն առաջարկվող կառուցվածքներում: Նախապես միջինացված արդյունաբերական կեղտաջրերի գունազերծումը (մինչև 85%) և դրանցից կախյալ մասնիկների հիմնական մասի (մինչև 84%) հեռացումն ի սկզբանե իրականացվել է բարակաշերտ պարզարաններում՝ օգտագործելով այլումինի կամ երկաթի սուլֆատի կոագուլյանտներ՝ պոլիակրիլամիդ ֆլոկուլյանտի (ՊԱՖ) հետ համատեղ: Ռեագենտի նստեցումից հետո կեղտաջրերն ունենին բավականին բարձր մնացորդային կոնցենտրացիաներ հիմնական աղտոտիչների համար (ըստ գույնի ինտենսիվության՝ 1:42-1:47, ըստ կախյալ մասնիկների՝ 43...46 մգ/լ, ըստ ԹԿՊ-ի՝ 132...135 մգՕ₂/լ, ըստ ԹՔՊ-ի՝ 355...363 մգ/լ և հատկապես ըստ մակերևութային ակտիվ նյութերի (ՄԱՆ)՝ 44...45 մգ/լ) և անհրաժեշտ է եղել խորը մաքրում, որն իրականացվել է ճնշումային ֆլոտացիայի միջոցով: Առաջարկվող երկու խառնուրդային հոսքերի կեղտաջրերը և ընդհանուր կեղտաջուրը ճնշումային ֆլոտացիայից հետո մաքրվում են մինչև դրանք քաղաքային կոյուղի արտաթողման աստիճանի: Վերոնշյալից հետևում է, որ առաջարկվող սխեմայում ճնշումային ֆլոտացիան կարող է օգտագործվել տրիկոտաժի արտադրության կեղտաջրերի մաքրման վերջնափուլում:

Բանալի բառեր. ռեագենտային մշակում, բարակաշերտ պարզեցում, խորը մաքրում, ճնշումային ֆլոտացիա, կախյալ և մակերևութային ակտիվ նյութեր

DEEP WASTEWATER TREATMENT OF KNITTED PRODUCTION BY PRESSURE FLOTATION

Varuzhan Shamyán*, Armenuhi Minasyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

*armsham_05@yahoo.com

The article proposes a consistent technological scheme for deep wastewater treatment of knitted production both separately for the general runoff and according to the principle of combined flows, when wastewater from two or more production processes is sent to one stream. This approach allowed us, already at the stage of averaging wastewater from selected technological processes, to obtain minimum concentrations of major pollutants in the average (mixed) flow of this stream and thereby ensure their effective treatment in the proposed facilities. Bleaching (up to 85%) of pre-averaged industrial effluents and removal of the main part of suspended solids from them (up to 84%) was initially carried out in thin-layer sedimentation tanks with the use of aluminum sulfate or iron coagulants in combination with polyacrylamide flocculant (PAF). After reagent sedimentation, wastewater had fairly high residual concentrations for the main pollutants (in terms of color intensity – 1:42-1:47, for suspended solids 43...46 mg/l, for BOD_{full} – 132...135 mg O_2 /l, for COD-355...363mg/l and especially for surfactants – 44...45 mg/l) and needed deep cleaning, which was carried out by pressure flotation. After pressure flotation, the mixed effluents of the proposed two streams and the total effluent were purified to the extent that they could be discharged into the city sewer. It follows from the above that in the proposed scheme, pressure flotation can be used in the final stage of wastewater treatment of knitted production.

Keywords: reagent treatment, thin-layer settling, deep cleaning, pressure flotation, suspended and surfactant species

Շամյան Վարուժան Լևոնի, տ.գ.թ., դոցենտ (ՀՀ, ք. Երևան) - ՃՀՀԱՀ, ՋՀՀՀ ամբիոն, (+374)77304463, armsham_05@yahoo.com, **Մինասյան Արմենուհի Սերյոժայի** (ՀՀ, ք. Երևան) - ՃՀՀԱՀ, Գիտությունների փորձարարական, մասնագետ, (+374)98071176, armikshamyán@gmail.com

Шамян Варужан Левонович, к.т.н., доцент (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Водных систем, гидротехники и гидроэнергетики, (+374)77304463, armsham_05@yahoo.com, **Минасян Арменуи Сергеевна** (РА, г. Ереван) - НУАКА, Научный отдел, специалист, (+374)98071176, armikshamyán@gmail.com

Shamyán Varuzhan, Doctor of philosophy (Ph.D) in engineering, Associate Professor (RA, Yerevan) - NUACA, chair of Water systems, Hydrotecnics and Hydroenergetings, (+374)77304463, armsham_05@yahoo.com, **Minasyan Armenuhi** (RA, Yerevan) - NUACA, specialist of the Scientific department, (+374)98071176, armikshamyán@gmail.com

Ներկայացվել է՝ 15.05.2023թ.

Գրախոսվել է՝ 25.05.2023թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.08.2023թ.

**ԱԶԳԱՅԻՆ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՆԱԽԱՏԻՊՈՎ ՀԱՆԳՍՏԻ ԿԱՑԱՐԱՆԻ ՏԻՊԱՅԻՆ
ՄՈՂՈՒԼՆԵՐԻ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ**

Շուշան Գևորգի Վարդանյան*, Անահիտ Խաչատուրի Պետրոսյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ

**Shushan.vardanyan 01@gmail.com*

Ներկայացված են պատմական Հայաստանի տարածքում ազգային բնակելի տների միջավայրի կազմավորման հորինվածքային առանձնահատկությունների, գործառական գոտիավորման և ռաբանական ձևավորման սկզբունքների կիրառմամբ մոդուլային կացարանների նախագծման նախադրյալները: Նպատակը և խնդիրներն են հայկական ժողովրդական տների ծագման և կազմավորման տիպաբանական վերլուծությամբ լիարժեք բացահայտել դրա բաղկացուցիչ տարրերի բովանդակությունը, կոնստրուկտիվ առանձնահատկությունները և կիրառել մոդուլային սկզբունքով նախագծվող կացարանների ձևագոյացման մեթոդը: Դիտարկվում են մոդուլային հիմքով ազգային տարրերով բնակելի կացարանների շինարարության տնտեսական շահավետությունը, ռեսուրսախնայողությունը, կառուցման արագությունը և էկոլոգիապես մաքուր հումքի կիրառումը, ինչը նպաստավոր նախադրյալներ է ստեղծում դրանց տարածման և զարգացման գործում: Ներկայացվում են հարմարավետ ազգային տարրերով մոդուլային կացարաններ, որոնք կիրառելի են ինչպես ազգային էկոտուրիզմի խթանման նպատակով, այնպես էլ հիմնական բնակության համար:


Բանալի բառեր. բնակելի, ազգային, գլխատուն, կացարան, մոդուլ, կոնստրուկցիա, տնտեսող, հարմարավետ, գեղեցիկ

Ներածություն

Հայկական ազգային բնակելի տների հատակագծային ձևերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց չափերը, տան ենթամասերի գոտիավորումը բխել են ընտանիքի հիմնական զբաղմունքից և նրանց կենցաղային սովորություններից, այլ կերպ ասած՝ նրանց կեցությունից: Տան կոնստրուկտիվ ձևն ու հանգույցները լուծվել են՝ ելնելով տեղական շինանյութերի հնարավորություններից և բնակլիմայական պայմաններից [1]: Տան բոլոր տարրերն առաջացել են ոչ թե պատահականորեն, այլ հստակ ֆունկցիայի համար, դրանք բոլորը խիստ պատճառաբանված են և տրամաբանորեն կապված միմյանց հետ: Բացակայում են ճարտարապետական ավելորդությունները, շքեղության և անիմաստ ձևերի միտումը: Ազգային կացարանների ինտերիերը ձևավորվել է բազմաթիվ գործոնների շնորհիվ: Դա, առաջին հերթին, հասարակության սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակն է, այդ թվում՝ տարբեր շրջանների և գոտիների բնակչության

տնտեսական կենսակերպի առանձնահատկությունը, ինչն իր արտացոլումն է գտել, մասնավորապես, տնտեսական շինությունների քանակի ու չափերի, գործառույթների, ձևերի և նախագծման մեջ [2]: Հարկ է ընդգծել, որ հայկական ավանդական կացարանի ինտերիերի կազմակերպման բնորոշ առանձնահատկություններից է դրա տնտեսական և բնակելի մասերի համակցումը [3]: Ուսումնասիրելով հայկական բարձրավանդակի բնակարանաշինությունը, ակնհայտ է դառնում ժողովրդական տների ձևաստեղծման և դասակարգման սկզբունքներն իրենց ճարտարապետական տարրերով: Նմանատիպ ճարտարապետական տարրերից կարելի է առանձնացնել սրահը՝ իր կենտրոնական օջախով, որն ամփոփված է երդիկավոր տանիքով: Երդիկի առավել տարածված օրինակներից հարկ է նշել հազարաշենը, որն իր անվանումը ստացել է՝ ելնելով կառուցման ձևից [4]: Առանձնացնելով ազգային բնակելի տների համար վերոնշյալ առանձնահատկությունները, ճարտարապետական և ինտերիերի մաս կազմող տարրերը՝ փորձարկեց առաջարկվող հայեցակարգային մոդուլային կացարաններում կիրառել դրանց նախագծման սկզբունքները:

Ներկայումս բնակելի կացարանների նախագծման արդիական մեթոդ են դարձել մոդուլային տեսակի կոնստրուկցիաները (նկ. 1): Փորձ է արվել համադրել հայկական բնակելի ժողովրդական տան կերպարը մոդուլային կոնստրուկցիաներով իրականացված ծավալով: Մոդուլային կացարանները՝ մոդուլային տներն արտադրվում են մեծ մասերով (բլոկներով) գործարանում հոսքագծի վրա, պատուհաններով և դռներով, բոլոր ներքին ինժեներական հաղորդակցողիներով: Հոսքագծերով արտադրությունը զգալիորեն նվազեցնում է մոդուլային կառույցների (բլոկների) արժեքը: Գործարանում մոդուլները հավաքելուց հետո դրանք տեղափոխվում են շինհրապարակ, որտեղ նախ պետք է տեղադրվեն կառույցների հիմքերը [5]: Նման կառույցների հիմքը չի կրում մեծ բեռ և, հետևաբար, չի պահանջում մեծ խորություն: Մոդուլային շենքերի պատերի ջերմատեխնիկական հաշվարկն իրականացվում է՝ հաշվի առնելով տարածքի կլիմայական պայմանները: Մոդուլային կառույցների տանիքը ձևավորվում է թեթև կառուցվածքային տարրերից (տախտակ, ծալքավոր մետաղական սալիկներ): Մոդուլային հիմքով հավաքվող տների հիմնական առավելությունը, իհարկե, շինարարության արագությունն է, որը կախված չէ տարվա եղանակից: Հայաստանի լեռնային պայմաններում պատրաստի հավաքվող տները մի քանի անգամ կարող են հեշտացնել շինարարության գործընթացը: Նման կերպ հյուրատնային կացարանների արտադրությունը և տեղակայումը մարզերի և համայնքների անհասանելի կամ դժվար հասանալի բնության տարածքներում կարող է դառնալ իրատեսական՝ այդպիսով նախադրյալներ ստեղծելով էկոտուրիզմի զարգացման հեռանկարում: Մոդուլային կացարանների բոլոր վերոնշյալ առավելությունները, դրանց ճկուն կառուցվածքը և մշակված մեխանիզմները հնարավորություն են տալիս դրանք կիրառելի դարձնել տարբեր հատակագծային լուծումների մշակման դեպքերում:



Նկ. 1 Մոդուլային կազմարանների առավելությունները

Նյութեր և մեթոդներ

Ուսումնասիրության նյութն է պատմական Հայաստանի տարածքում Հայկական բնակելի տունը: Կազմարանների տեսակի, կառուցվածքի և ինտերիերի վրա մեծ ազդեցություն են ունեցել տվյալ հասարակության մեջ տիրող սոցիալ-տնտեսական հարաբերությունները, քաղաքական պայմանները, տնտեսության ուղղվածությունը, սոցիալական տարբերակվածության աստիճանը, ընտանիքի ձևերը, կրոնական համոզմունքները և էթնոմշակութային կապը հարևան ժողովուրդների հետ [6, 7]: Մեծ ուշադրություն էր դարձվում հիմնական կազմարանի՝ տան և հյուրասենյակների (գոմի օդա և հյուրասենյակ) ինտերիերի դեկորատիվ և կառուցվածքային տարրերին: Հարդարման հիմնական առարկաներն էին պատերը, հատակը, սյուներն ու առաստաղները: Ինտերիերը զարդարելու հիմնական միջոցը զարդանախշն էր, որն օգտագործվում էր, մասնավորապես, շենքերի այն տարրերի վրա, որոնք առանց դրա անհրապույր տեսք կունենային: Սովորաբար պատերը եղել են անմշակ, ջարդված կամ կիսատաշ քարերից, առանց ծեփի, կամ ծղոտի հետ խառնված կավով սվաղված: Պատերի միապաղաղությունը մեղմում էր դրանց մեջ մեծ և հատկապես փոքր չափերի պահարանների առկայությունը (փորագրված «դռներով» և առանց դրա), որոնք հաճախ հարթ սրբատաշ քարերով էին շրջանակված: Բազմազանություն էին մտցնում նաև պատերի մեջ խրված փոքրիկ ճաղավանդակները, որոնց վրա մադեր, գդալների տուփեր, չոր պղպեղի կապոցներ էին կախված, ինչպես նաև դնում էին լամպեր: Գորգերն ու կարպետները, փոված հատակին կամ պատերից կախված (հատուկ դեպքերում), ինտերիերին գունեղ տեսք էին հաղորդում [8, 9]:


Հետազոտության մեթոդը հիմնվում է ժամանակագրական հետևողականությամբ պատմական, տեսական և նախատիպային չափանիշների ուսումնասիրման, համեմատական վերլուծության վրա [10]:

Արդյունքներ և քննարկում


Ներկայացվում է ժողովրդական տների մերօրյա կիրառման արդիականությունը՝ Հայաստանում ազգային էկոլոգոսաշրջության զարգացման նպատակով [11]:

Առաջարկվում է ներկայումս և ապագայում ազգային կերպարով արդի պահանջները բավարարող բնակելի կացարանի մոդուլ: Ուսումնասիրության նորարարությունը՝ դա մոդուլային կոնստրուկցիայի, ֆունկցիոնալության, և հայկական ազգային բնակելի տան ծավալատարածական ձևի, կերպարի համատեղման փորձն է: Դիտարկվում են ազգային բնակելի տների ինտերիերի բաղկացուցիչ տարրերը, դեկորատիվ կիրառական տարրերը, կահավորանքի բնորոշ, չկրկնվող տեսակները, ազգային ինքնատիպ կերպարն ընդգծող մեթոդները, ծավալատարածական և հատակագծային հորինվածքի մակարդակում ազգային տան ձևավորման յուրօրինակ լուծումները:

Գոյություն ունեցող նախատիպերը վերլուծելիս, որոշելով որակապես կարևոր այն հատկությունները, որոնցով պետք է օժտված լինի այդպիսի առարկան, այս ուսումնասիրությունը ներկայացնում է բնակելի համալիրի նոր մոդել ժամանակավոր բնակության համար (նկ. 2, 3, 4):



Նկ. 2. Մոդուլ 1, 4 անձ.
ա - հատակագիծ, բ - առաստաղի
հատակագիծ




Նկ. 3. Մոդուլ 2, 6 անձ.
հատակագիծ




Նկ. 4. Մոդուլ 3, 10 անձ.
հատակագիծ

Առաջարկվող մոդուլային կացարանը հայեցակարգային և տեսական մակարդակում պետք է համապատասխանի այնպիսի չափանիշների, ինչպիսիք են.

- *սոցիալ-հոգեբանական կյանքի հարմարավետություն:* Հոգեբանական անվտանգությունը կենսունակության հիմքն է, ամենակարևոր պայմանն անձի լիարժեք զարգացման, նրա հոգեկան առողջության պահպանման և ամրապնդման համար,
- *բնապահպանական բարեկեցություն:* Համալիրի տեղակայումը հիմնականում էկոլոգիապես անվտանգ տարածքներում: Որպես նյութ էկոլոգիապես մաքուր հումքի օգտագործում, որը պետք է օժտված լինի ջերմամեկուսիչ, խոնավակայուն, ջրամեկուսիչ հատկություններով: Մոդուլի պատերը գործարանային արտադրության են: Երեսապատման համար նախատեսված են մետաղական ծակոտկեն պանելներ, փայտ: Տանիքը ջերմակայուն և ջրամեկուսիչ նյութով փշված է ներսից: Հաջորդ մոդուլները միացվում են մետաղական ելուստ-անկյունակների միջոցով: Մոդուլային բլոկ պատերը իրար են միանում մետաղական ելուստներով, բաղկացած են մի քանի շերտերից՝ արտաքին հարդարում, ջրամեկուսացում, ջերմամեկուսացում՝ հանքային բամբակով, գոլորշիների արգելք, ներքին հարդարում: Բլոկների հատակները նույնպես բազմաշերտ են, այդ թվում՝ արտաքին ծածկույթ, ջրամեկուսացում, ջերմամեկուսացում, գոլորշիների արգելք, ենթահարկ, վերին շերտ,
- *նոր տեխնոլոգիաների և նյութերի օգտագործմամբ սերիական արտադրություն:* Կառույցի շինարարություն հնարավորինս սեղմ ժամկետներում (նկ. 5, 6),



Նկ. 5 Մոդուլ 1, 4 անձ.
ա - տրոհված մոդուլային
հանգույցներով, բ - բնակելի
բջիջների համարակալված
մոդուլային պատ հանգույցները




Նկ. 6. Բնակելի բջջի մոդուլային
տարածական հանգույցները

- *հարմարվողականությունը տեղանքի ռելիեֆին:*

Հայեցակարգային գլխավոր մոդուլի նախագծման հիմքում ընկած են ազգային բնակելի տների հատակագծման սկզբունքները, մասնավորապես, մեկ բաժնով տների օրինակով սրահն՝ իր կենտրոնական օջախով (գլխատնով), որն ամփոփված է երդիկավոր տանիքով՝ հազարաշենով: Մեկ բաժնով տների գլխավոր առանձնահատկություններից էր նաև տարբեր գործառնությունների համատեղումը մեկ սենյակում, ինչը սահմանափակ մակերեսի պայմաններում լավագույն լուծումն է (նկ. 2):

Շնորհիվ իր կոնստրուկտիվ առանձնահատկությունների, մոդուլների նման համակարգը թույլ է տալիս կատարել վերահատակագծում ըստ անհրաժեշտության: Բնակության համար առաջարկվող առաջին գլխավոր մոդուլը նախագծված է 4 անձի լիարժեք բնակության համար: Մոդուլի բնակելի մակերեսը 22 մ² է, որտեղ տեղակայվում են մեկ ննջարան՝ երկհարկանի մահճակալով, հյուրասենյակ և միացված խոհանոց, լոգասենյակ: Հյուրասենյակի բազմոցը, շնորհիվ ձևափոխման, կարող է վերածվել մահճակալի՝ ստեղծելով լրացուցիչ մահճակալային երկու տեղ (նկ. 7): Այստեղ մեկ սենյակում են տեղակայվում խոհանոցը, հյուրասենյակային գոտին և նաև շնորհիվ ձևափոխման՝ ննջարանը: Որպես գլխատան կարևոր և բաղկացուցիչ մաս հանդիսանում էր օջախը, վերևում գմբեթաձև զարգացող հազարաշենով (նկ. 8): Որպես մոդուլի տիպիկ հայկական բնորոշող գիծ ընդունված է հենց այդ գաղափարը, սակայն տարածքի և մակերեսի օպտիմալ օգտագործման նպատակով՝ գլխատունը շեղված է կենտրոնից և տեղակայված է անկյունային հատվածում [12]:



Նկ. 7. Հյուրասենյակի տրանսֆորմացվող սխեման

Լինելով մոդուլային, արագ հավաքվող կացարան, այս մոդուլը նախատեսվում է տեղակայել հայկական լեռնաշխարհի բարդ ռելիեֆային գոտիներում, մարդկանցից կտրված վայրի բնության գրկում՝ այդպիսով զարգացնելով էկո-զբոսաշրջությունը: Ուստի կարևոր էր ազգային տարրերը ընդգծելուց զատ շեշտադրել հայկական լեռնաշխարհի բնությունը և հնարավորության տակ ունենալ գեղեցիկ, տեսարժան տեսարաններ մոդուլի ցանկացած անկյունից: Մոդուլն ունի մեծ համայնապատկերային պատուհաններ՝ տեղակայված հենց հյուրասենյակ-ննջասենյակի մոտ, նաև նախատեսված է բաց պատշգամբ՝ Հայաստանի գեղատեսիլ բնությունը տեսանելի դարձնելու միտումով:



Նկ. 8. Հյուրասենյակ

Մոդուլի ընդհանուր 25 մ² մակերեսում տեղավորված են ժամանակավոր կացության և հանգստի համար անհրաժեշտ բոլոր հարմարությունները, պահպանված են բոլոր երգոնոմիկ պահանջները:

Հյուրասենյակի տարածքում տարբեր գործառնությունների համախմբումը ենթադրում է ձևափոխվող կահույքի և ինտերիերի տարրերի նախագծում: Բազմոցը տեղակայվում է մոդուլի հիմքում առանցքավաճակումի մեջ: Հայկական տներում նման հնարքն օգտագործում էին ջերմության պահպանման և օջախին մոտ լինելու նպատակով: Քանի որ մոդուլն ունի 600 լ/ժ հաստությանը հիմք, այդ մակերեսն առավել նպատակային օգտագործելու համար դրա մեջ առանձնացված են նկուղային պահոցներ: Նաև շնորհիվ նման կոնստրուկտիվ լուծման հնարավոր է դառնում բազմոցի մահճակալի դետալը թաքցնել հիմքի մեջ և անհրաժեշտության դեպքում այն առաջ քաշել և փակել բազմոցի քառակուսի բացվածքը (նկ. 7):

Մակերեսի խնայողության համար ճաշասեղանի փոխարեն նախատեսված է օգտագործել ձևափոխվող լրացրասեղանը, որը, շնորհիվ մետաղական գլանաձև հիմքի, կարող է փոխել իր բարձրությունը և մեծացնել մակերեսը: Հաջորդ ձևափոխումը պայմանավորված է կենսաբուխարու տեղաշարժմամբ: Կենսաբուխարին կախվում է մետաղական լարերով երդիկից, անհրաժեշտության դեպքում այն իջեցվում է սեղանի մակարդակին կամ բարձրացվում մինչև երդիկի բացվածք: Այսպիսով հնարավորություն է ստեղծվում մի քանի գործառնություններ համախմբել:

Երկրորդ մոդուլի կցումը հնարավորություն է տալիս ավելացնել մահճակալային տեղերի քանակը: Այն նախատեսված է լրացուցիչ 4 անձի բնակության համար: Մոդուլն ունի երկու ննջասենյակ, մեկ լոգասենյակ, միջանցք: Մոդուլի մակերեսը կրկին 25 լժ է, առաստաղի ընդհանուր բարձրությունը՝ 2500 լ/ժ, հազարաշենի ամենաբարձր կետում 0 նիշից՝ 3300 լ/ժ: Հազարաշենի ծածկն այս մոդուլում տեղակայվում է երկտեղանի մահճակալով ննջասենյակում: Ննջարանը հյուրասենյակի նման ունի մեծ համայնապատկերային շարժական պատուհաններ՝ տեսարանների ապահովման նպատակով: Երկրորդ մոդուլի կցման դեպքում այն հանդիսանում է որպես գլխավոր ննջասենյակ՝ հյուրասենյակում տեղակայվելու փոխարեն: Երկրորդ ննջասենյակում տեղադրվում է երկհարկանի մահճակալ՝ առաջին մոդուլի նմանությամբ: Երկու մոդուլը կարող է սպասարկել 6 անձի բնակության համար անհրաժեշտ պայմանները: Ընդ որում, առանց գլխավոր մոդուլի մյուս մոդուլները չեն կարող կենսագործել, քանի որ խոհանոցը և ճաշասենյակային գոտիներ մյուս մոդուլներում բացակայում են (նկ. 3):

Երրորդ մոդուլն իրենից ներկայացնում է ննջասենյակային բլոկ, կարող է սպասարկել 8 անձի հանգիստ: Ինտերիերը տիպային է, մոդուլներում կրկնվում են միևնույն հատակածակի նյութը, պատերի երեսապատման նյութերը, կահույքը: Քանի որ հանգստացողների քանակը երրորդ մոդուլի հետ հասնում է 8-ի, ուստի անհրաժեշտություն կար առանձին ավելացնել ճաշասեղան և աթոռներ, արդյունքում առաջին մոդուլում ննջասենյակը փոխարինվում է ճաշասենյակով (նկ. 4): Հազարաշենն այս մոդուլում ևս տեղակայվում է գլխավոր ննջասենյակում, կրկնելով նախորդ մոդուլի հատակագծումը: Երեք մոդուլները միասին կազմում են 75 լժ տարածք: Արտաքինից մոդուլը երեսապատված է մետաղական և փայտային պանելներով: Փայտային պանելները փորագրված են հայկական զարդանախշերով: Զարդանախշերի գեղեցկությունն ընդգծելու և



Նկ. 9. Մոդուլների տեղակայումը կտրվածքով

շեշտելու նպատակով դրանք լուսավորվում են Led լուսավորության սարքերով: Մոդուլը, կախված իր տեղակայման աշխարհագրական դիրքից, ունենալու է տվյալ տարածաշրջանին բնորոշ զարդանախշերով փայտային պանելներ: Զարդանախշերն ինտերիերում հանդիպում են պատուհանների դիմաց տեղադրված դեկորատիվ միջնորմերի տեսքով,

որոնք բացի դեկորատիվ նշանակությունից, ունեն նաև արևից պաշտպանելու կարևոր ֆունկցիա: Շնորհիվ լույս ու ստվերի հետաքրքիր խաղի՝ այդ միջնորմերից ընկնող ստվերները հետաքրքիր հայկական միջավայր են ստեղծում, ողողելով տունը հայկական յուրահատուկ և խորհրդավոր շնչով (նկ. 8):

Արտաքինից իր թեք տանիքով մոդուլը նույնպես հիշեցնում է հին հայկական տների կերպարը: Հազարաշենի առկայությունը բնակելի տներում ուներ իր ֆունկցիոնալ նշանակությունը, այն իր կարևոր ֆունկցիոնալ դերն է կատարում նաև այս մոդուլի ծավալատարածական հորինվածքում: Շնորհիվ գմբեթաձև տանիքի, որը թեք հարթակներով փակվում է արտաքինից, հնարավորություն է ստեղծվում այդ թեքությամբ տեղադրել արևային պանելներ՝ մոդուլի ինքնաբավ աշխատանքն ապահովելու համար: Նաև պետք է ընդգծել, որ տանիքի թեքության մեջ հնարավոր է թաքցնել ջրի համար նախատեսված տարան, որը նաև անձրևաջրերի վերամշակման ֆիլտրերի միջոցով կարող է լրացուցիչ ոռոգման ջրի աղբյուր ստեղծել: Շնորհիվ կենտրոնական գլանաձև հիմքի, որի վրա ձգվելու է մոդուլը, հնարավոր է դառնում անարգել անցկացնել բոլոր ջրատար և ջրահեռացման խողովակները մեկ տեղով (նկ. 9):



Նկ. 10. Հյուրասենյակ, խոհանոց



Նկ. 11. Մոդուլ 1. տեղակայված

Հաշվի առնելով հայկական լեռնաշխարհի բազմազանությունը՝ մոդուլային կացարանների առանձնակի մշակած կոնստրուկցիաները հնարավորություն են տալիս դրանք տեղակայել ինչպես հարթավայրային, այնպես էլ լեռնային և ջրային հատվածներում: Հստակ հատակագծով

մշակված ինտերիերը թույլ է տալիս իրար կցել տարբեր մոդուլներ և ստանալ բազմանդամ ընտանիքների, մեծ խմբով հանգստացող զբոսաշրջիկների պահանջները բավարարող կացարաններ:

Շարժական, կոնստրուկտիվ տեսանկյունից անկախ և ինքնաբավ, հարմարավետ բնակելի բջջի ստեղծման գաղափարը չի կարելի համարել պատահական կամ անցողիկ: Այն պայմանավորված է միայն շինարարական կոնստրուկցիաների, ժամանակակից տեխնոլոգիաների, նոր թեթև և ամուր նյութերի ստեղծմամբ (նկ. 10, 11):

Եզրակացություն

Հաշվի առնելով, որ Հայաստանը ներկայումս կայանում է որպես զբոսաշրջային երկիր, մյուս կողմից համաշխարհային միտումը դեպի անհատական փոքրիկ բնակելի բջիջներում կեցություն կազմակերպելը, մոդուլային կացարանների հետզհետե աճող ֆունկցիոնալ և նպատակային առավելությունները տվյալ հայեցակարգային առաջարկով հնարավոր է խթանել հայկական տուրիզմի զարգացումը, փորձել շրջանառության մեջ դնել ու նպաստել հայկական մշակույթի տարածմանը:

Հայեցակարգային առաջարկով փորձ է արվում նորովի մեկնաբանել պատմական հայկական բնակելի տների ինտերիերը և այն համադրել արդի նյութերի և տեխնոլոգիաների հետ, ընդգծել հայկական բնակելի տների ծավալատարածական և հատակագծային լուծումները, դարձնել այն հանրաճանաչելի հասարակության լայն զանգվածներին: Տարեցտարի աճող ներքին և էկո-զբոսաշրջության զարգացման պայմաններում կարևոր դեր ունեն հյուրատների արդիականացումը և ժամանակակից նորարարական տեխնոլոգիաների կիրառումը դրանց նախագծման հիմքում: Մոդուլային տներն իրենց տեսակով, տեխնոլոգիաներով, կիրառվող նյութերով, կոնստրուկտիվ առանձնահատկություններով հրաշալի լուծում են Հայաստանում վերոհիշյալ արդիական հյուրատնային կացարաններ կառուցելու համար: Զբոսաշրջության համար գրավչություն ապահովող գործոններից է ազգային էթնիկ տարրերի, ավանդույթների, ճարտարապետության և դեկորատիվ կիրառական տարրերի կիրառությունը, ուստի ազգային բնակելի տների կերպարայնության կիրարկումը հանգստի կացարանների նախագծման հիմքում կարևոր նպատակ է հետապնդում:

Առաջարկվող հայեցակարգային մոդուլները լուծում են առաջադրված նախագծային բոլոր խնդիրները և նպատակները: Ուսումնասիրելով և վերլուծելով հին հայկական ազգային բնակելի տների ճարտարապետությունը և ինտերիերը, հնարավոր եղավ առանձնացնել կարևոր առանցքային նշանակության կոնստրուկտիվ և դեկորատիվ տարրերը, կիրառել և մեկնաբանել դրանք նորովի, դարձնել ժամանակակից միջավայրում ներդաշնակ ինտեգրվող մաս և նախագծել արդի ինքնաբավ գործող բջիջ:

Գրականության ցանկ

- [1] Վ. Հարությունյան, Հայկական ճարտարապետության պատմություն. Երևան, 1992, 187 էջ:
- [2] Դ. Քերթմենցյան, Վան քաղաքի պատմաճարտարապետական ժառանգությունը. Երևան, 2012, 39 էջ:
- [3] Ս. Վարդանյան, Հայկական ժողովրդական բնակելի տների ճարտարապետություն. Երևան, 1959, 10 էջ:
- [4] Է. Հակոբյան, Աշտարակի շրջանի ժողովրդական բնակարանի ճարտարապետությունը. Երևան, 1964, 22 էջ:
- [5] Инновация в строительстве жилья – модульные дома.
<https://yellowhome.ru/2018/05/03/innovaciya-v-stroitelstve-zhilya-modulnye-doma/>
- [6] Պապուխյան Ն., Սյունիքի ժողովրդական ճարտարապետությունը, Երևան, 1972, 12 էջ:
- [7] А. Марутян, Интерьер армянского народного жилища (вторая половина XIX - начало XX вв.). Ереван, 1984, 65 с.
- [8] В.Л. Глазычев, Зарождение зодчества. Стройиздат, Москва, 1984. 126 с.
- [9] П.И. Борзовский, Древнейшее прошлое человечества. Наука, Москва, 1980. 240 с.
- [10] А.Л. Оппенгейм, Древняя Месопотамия. Портрет погибшей цивилизации. Наука, Москва, 1980, 408 с.
- [11] А. Тарасенок, Виды экологического туризма, Москва, 2010, 170 с.
- [12] <https://www.armgeo.am/ru/armenian-hazarashen/>

КОНЦЕПТУАЛЬНОЕ ПРЕДЛОЖЕНИЕ ТИПОВЫХ МОДУЛЕЙ ЖИЛЬЯ ДЛЯ ОТДЫХА С ПРОТОТИПОМ НАЦИОНАЛЬНЫХ ЖИЛЫХ ДОМОВ

Шушан Геворговна Варданян*, Анаит Хачатуровна Петросян

Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА

*Shushan.vardanyan 01@gmail.com

Представлены предпосылки проектирования модульных жилищ с применением композиционных особенностей формирования среды национальных жилых домов на территории исторической Армении, принципов функционального зонирования и стилистического оформления. Задачи и цель - посредством типологического анализа происхождения и формирования армянских народных домов полностью раскрыть содержание составляющих их элементов, конструктивных особенностей и применить их при формообразовании домов, проектируемых по модульному принципу. Рассматриваются экономическая выгода, ресурсосбережение, скорость строительства и применение экологически чистого сырья для строительства жилых домов с национальными элементами на модульной основе, что создает благоприятные предпосылки для их распространения и развития. Представлены модульные апартаменты с удобными национальными элементами, которые применимы как для продвижения национального экотуризма, так и для основного проживания.

Ключевые слова: жилой, национальный, притвор, жилье, модуль, конструкция, экономичный, удобный, красивый

CONCEPTUAL PROPOSAL OF TYPICAL HOUSING MODULES FOR RECREATION WITH A PROTOTYPE OF NATIONAL RESIDENTIAL BUILDINGS

Shushan Vardanyan*, Anahit Petrosyan

National University of Architecture and Construction of Armenia, Yerevan, RA

**Shushan.vardanyan01@gmail.com*

The prerequisites for the design of modular dwellings using the compositional features of the formation of the environment of national residential houses in the territory of historical Armenia, the principles of functional zoning and stylistic design are presented. Tasks and purpose through a typological analysis of the origin and formation of Armenian folk houses, to reveal fully the content of their constituent elements, constructive features and to apply them as a basis for the design of housing according to the modular principle. It is considered the economic profitability, resource saving, speed of construction and the use of environmentally friendly raw materials for the construction of residential buildings with national elements on a modular basis. This creates favorable conditions for their distribution and development. It is presented modular dwellings with comfortable national elements, which are applicable both for the promotion of national, eco-tourism, and for the main residence.

Keywords: residential, national, vestibule, dwelling, module, construction, economical, comfortable, beautiful

Վարդանյան Շուշան Գևորգի (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ինտերիերի և էքստերիերի դիզայնի սմբիոն, մագիստրանտ, (+374)93726248, *Shushan.vardanyan01@gmail.com*, **Պետրոսյան Անահիտ Խաչատուրի, Ճ.թ., դոցենտ** (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Ինտերիերի և էքստերիերի դիզայնի սմբիոն, (+374)93357849, *an_arch@mail.ru*

Варданыан Шушан Геворговна (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Дизайна интерьера и экстерьера, магистрант, (+374) 93726248, *Shushan.vardanyan01@gmail.com*, **Петросян Анаит Хачатуровна, канд.арх., доцент** (РА, г. Ереван) - НУАКА, кафедра Дизайна интерьера и экстерьера, (+374)93357849, *an_arch@mail.ru*

Vardanyan Shushan (RA, Yerevan) – NUACA, department of Design Interior and Exterior, master student, (+374)93726248, *Shushan.vardanyan01@gmail.com*, **Petrosyan Anahit doctor of Philosophy (Ph.D) in Architecture, Associate Professor** (RA, Yerevan) – NUACA, department of Design Interior and Exterior, (+374)93357849, *an_arch@mail.ru*

Ներկայացվել է՝ 05.05.2023թ.

Գրախոսվել է՝ 26.05.2023թ.

Ընդունվել է տպագրության՝ 30.08.2023թ.

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ «ՓՈՔՐ ԿԵՆՏՐՈՆԻ» ՈՒՂԻՆԵՐԻ ԵՎ ՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ
ՃԱՐՏԱՐԱԿԵՏԱՏԱՐԱԾԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԱՐԺԵՎՈՐՄԱՆ
ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

Մեսրոպ Վարդանի Սահակյան

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ք. Երևան, ՀՀ
sahakyan0707@gmail.com*

Հոդվածում դիտարկվում են ք.Երևանի «Փոքր կենտրոնի» Ճարտարապետատարածական միջավայրի գեղագիտական վերաարժևորման հիմնախնդիրները: Առանձնացվել և ուսումնասիրվել են պատկերային բովանդակությանը վերաբերող ֆիզիկական ձևերը, մասնավորապես՝ ուղիները և հանգույցները, որոնք գեղագիտական վերաարժևորման հիմնական օբյեկտների մասն են կազմում: Համակարգվել են այդ օբյեկտների տեսակները և դասակարգվել ըստ նշանակության և գործառույթի: Բացահայտվել են օբյեկտների փոխադարձ դասավորվածությունը, միմյանց հետ փոխկապակցվածությունը, համաստորադասությունը և տրվել գնահատականներ ըստ օբյեկտի արժեքի չափանիշների, ինչը հիմք է ծառայում գեղագիտական վերաարժևորման հիմնական խնդիրների բացահայտման, առաջարկությունների և մոդելների մշակման համար:

***Բանալի բառեր.** ք. Երևանի կենտրոն, գեղագիտական վերաարժևորում, Ճարտարապետական միջավայր, քաղաքային կառուցվածք, գեղագիտական արտահայտչականություն, ուղիներ, հանգույցներ*

Ներածություն

Ք. Երևանի «Փոքր կենտրոնի» առաջնահերթ խնդիրներից է Ճարտարապետատարածական միջավայրի գեղագիտական վերաարժևորումը: Այսօր միջավայրի զարգացման խնդիրները հիմնականում լուծվում են առանձին տեղային տարածքներում՝ կոնկրետ օբյեկտների համար, բոլորովին հաշվի չառնելով միջավայրային համալիր մոտեցումները և Ճարտարապետական դիզայնին վերաբերող հարցերը [1]:

Նախորդ հոդվածում [2] որպես գործիքակազմ դիտարկվել է «Պատկերային բովանդակությանը վերաբերվող ֆիզիկական ձևերի» տեսությունը, ինչի արդյունքում բացահայտվել և համակարգվել են վերաարժևորման հիմնական օբյեկտներն ըստ ուղիների, եզրագծերի, շրջանների, հանգույցների, կողմնորոշող օբյեկտների: Պարզաբանվել է, որ ք. Երևանի «Փոքր կենտրոնի» վերաարժևորման գեղագիտական խնդիրների լուծման, հիմնական սկզբունքների և օրինաչափությունների առաջադրման համար առաջնահերթ է բացահայտել միջավայրի հիմնական բաղադրիչների գործառնական նշանակությունը, կառուցվածքը, փոխադարձ դասավորվածությունը, միմյանց հետ փոխկապակցվածությունը, համաստորադասությունը, և տալ գնահատականներ ըստ արժեքի չափանիշների [2]:

Սույն աշխատությունում ավելի մանրամասն ուսումնասիրության են ենթարկվել վերաարժևորման հիմնական օբյեկտների՝ ուղիների և հանգույցների բաղադրիչները:


Նյութեր և մեթոդներ

Ըստ ք. Երևանի «Փոքր կենտրոնի» կազմված վերաարժևորման հիմնական օբյեկտների համակարգի [2], հետազոտության ընթացքում դիտարկվել են ուղիների և հանգույցների բաղադրիչները: Իրականացվել են մասնագիտական գրականության ուսումնասիրություն, արխիվային նյութերի հավաքագրում, տեղադրիտական ուսումնասիրություն, համակարգային, համեմատական և իրավիճակային վերլուծություններ: Այնպիսի գործոնները, ինչպիսիք են տարածքի սոցիալական նշանակությունը, դրա գործառույթները, պատմությունը, որոնք նույնպես ազդում են շրջակա միջավայրի բնույթի վրա, նույնպես հաշվի են առնվել հետազոտության մեջ: Առանձնացված օբյեկտները ենթարկվել են SWOT վերլուծության, և տրվել գեղագիտական արժեքի որոշման և հնարավոր հետագա բարելավման գնահատականները [3, 4]:

Արդյունքներ և քննարկում

Ք. Երևանի «Փոքր կենտրոնի» ուղիների և հանգույցների ավելի մանրամասն հետազոտման համար դիտարկվել է վերաարժևորման օբյեկտների համակարգը՝ ըստ «Պատկերային բովանդակությանը վերաբերվող ֆիզիկական ձևերի» [5]:

Ըստ վերաարժևորման օբյեկտների համակարգի՝ կատարվել է կողմնորոշիչների կառուցվածքային վերլուծություն ք. Երևանի «Փոքր կենտրոնի» համար՝ ըստ *ուղիների* և *հանգույցների* բնույթի (նկ. 1):



Նկ. 1. Կողմնորոշիչների վերլուծություն ըստ ք. Երևանի «Փոքր կենտրոնի» ուղիների և հանգույցների բնույթի

Ուղիները հաղորդակցություններ են, որոնց երկայնքով դիտորդը կարող է շարժվել և ընկալել քաղաքի մնացած բոլոր տարրերը [5]: Փողոցները, մայրերը, մայրուղիները, երկաթուղիները, ջրանցքները կազմում են այդ հաղորդակցության մի մասը: Բացահայտվել է «Փոքր կենտրոնի» հետիոտն *ուղիների* կառուցվածքը, որը դասակարգվել է ըստ փողոցների և հետիոտն մուլերի, փողոցները՝ ըստ տրանսպորտային ուղիների և մայրերի: «Փոքր կենտրոնում» ուղիներն ունեն ոչ միայն ուղղակի կառուցվածքային հաղորդակցական գործառույթ, այլև յուրաքանչյուրն ունի իրեն հատուկ դիմագիծ, որը կարելի է առանձնացնել հետևյալ կերպ.

- ամբողջ փողոցի երկայնքով կամ որոշ հատվածում կոնկրետ գործունեության կենտրոնացում,
- փողոցի հորինվածքային կառուցվածք,
- կառուցապատման բնութագիր (Ժամանակագրական հատկանիշներ, ոճական պատկանելիություն, հարկայնություն, ճակատների հորինվածքային կառուցվածք, շենքերի առանձին բաղադրիչներ, նկարվածքներ, օգտագործված նյութեր),
- քաղաքային կահավորում և գովազդ:

Զարգացման ներկայիս փուլում շենքերի ճակատների բաղադրիչները (պատշգամբների ձևեր, բացվածքների համաչափություններ, դեկորացիաներ, նկարվածքներ, օգտագործված նյութեր), ըստ հորինվածքային օրինաչափության և ներդաշնակության չափանիշներին ենթարկվելու մակարդակի, սահմանում են միջավայրի գեղագիտական որակը՝ բարելավելով կամ նսեմացնելով այն (նկ. 2):



Նկ. 2. Սայաթ - Նովա փողոցում շենքերի ճակատների հորինվածքային ամբողջականության կազմաքանդման դեպքեր

Առանձնացվել է ք. Երևանի «Փոքր կենտրոնում» հետիոտն կառուցվածքի երեք տեսակ.

- ուղիներ՝ հետիոտն մուլեր, որոնք ունեն ձգված կառուցվածք,
- հանգույցներ՝ հետիոտն գոտիներ,
- հետիոտն ստորգետնյա տարածություններ:

«Փոքր կենտրոնում» կազմավորված հետիոտն գոտիներում առկա է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, ռեկրեացիաների, սպասարկման և Ժամանցի կետերի, կանաչ գոտիների բարձր կենտրոնացում: Դրանք հիմնականում ձևավորված են էսպլանադների, հետիոտն փողոցների, քաղաքի հրապարակների հետիոտն մասերի վրա [6]: Հետիոտն մուլերն են լայն փողոցները կամ ձգված բուլվարները:


Հանգույցներն իրենցից ներկայացնում են ուղիների միացման և կենտրոնացման վայրերը: Հանգույցները սերտ կապված են ուղիների հետ՝ խաղալով իրադարձությունների կապող դերը շարժման ընթացքում, իսկ որոշ դեպքերում՝ դառնալով դոմինանտ: Դրանք առաջին հերթին կապող օղակներ են, տրանսպորտային հաղորդակցությունների հատման վայրեր, խաչմերուկներ կամ ուղիների միաձուլումներ, կտրուկ անցումներ մեկ ենթակառուցվածքից մյուսը, իսկ որոշ դեպքերում՝ պարզապես գործառույթների առավելագույն կենտրոնացման վայրեր [5]:

Ուսումնասիրվել են «Փոքր կենտրոնի» *հանգույցները*, որոնք դասակարգվել են՝ ըստ հրապարակների, հետիոտն գոտիների, ստորգետնյա հետիոտն գոտիների և խաչմերուկների:

Հրապարակների կառուցվածքի գլխավոր հատկանիշներն են՝ ամբողջականությունը, մեկուսացվածությունը, բաց կենտրոնը և դոմինանտի առկայությունը: Հրապարակների տարածության այս չափանիշներն իմաստավորվում են մարդու հոգեֆիզիոլոգիական ընկալմամբ [7]: Ըստ երկրաչափական մոտեցման՝ հրապարակներում շրջապատող կառույցների բարձրության համամասնությունը հիմնականում սահմանվում է 1:1–1:2 հարաբերությամբ, որով բնութագրվում է հրապարակի չափերի և դրա դոմինանտի հարաբերակցությունը [8]: Հրապարակը հիմնականում կազմակերպվում է կենտրոնական առանցքի շուրջ: Օրինակ՝ Սախարովի հրապարակի կենտրոնական մասում տեղադրված է Սախարովի հուշարձանը, որի առանցքի շուրջ կազմակերպվում է հրապարակը (նկ. 3ա): Ազատության հրապարակը երկրաչափական բնութագրով բաց է ողջ շրջապատի համար, սակայն արտաքինապես տարածությունն ընկալվում է որպես ամբողջական հորինվածք: Այդ տեսքը հրապարակը ստանում է հարակից փողոցների շենքերի շարքի բոլոր առանցքային ուղղությունների տեղադրումով և շրջապատող այգու առկայությամբ [7]:

Քաղաքային հրապարակների ներքին բաց տարածությունների միջավայրի կազմակերպման համար, որպես գեղագիտական արտահայտչականության չափանիշներ, առանձնանում են հիմնական ճարտարապետական շափտային հնարքներ [9]: Առաջինը հնարավորություն է տալիս օգտագործել միջավայրի կանաչապատման համակարգը՝ որպես կառուցվածքային բաղադրիչ: Օրինակ՝ բույսերի տեղակայումը հիմնական հորինվածքային առանցքների երկայնքով հստակորեն ընդգծում է հրապարակի կառուցվածքը, մասշտաբը, ձևավորում է ուրվագիծը և ուժեղացնում դոմինանտի տպավորությունը, բացի այդ՝ ստեղծում է գունային կերպարային միջավայր: Երկրորդը հիմնված է երկրաչափական տարրերի օգտագործման վրա, երբ բնական բաղադրիչները բերվում են խիստ երկրաչափական ձևի: Բուսականության դինամիկ ուրվագծի օգտագործման միջոցով բուսականության եզրագծերը ստեղծում են տարածության մեջ շարժման տպավորություն և ուղեկցվում են տարբեր դիտակետերից ընկալման բարենպաստ տեսարաններով [10]: Երրորդը հիմնված է դինամիկայի կառուցման վրա, երբ լանդշաֆտի բաղադրիչները տեղակայվում են տարբեր շարժման ուղղություններով՝ ստեղծելով ընկալման դիտակետերի փոփոխական համակարգ և ձևավորելով շարժման ուղղությունը [11]: Ազատության հրապարակի հատակագծում կանաչապատ մակերեսների եզրագծերն ընդգծում են հրապարակի կառուցվածքը և

շեշտադրում Օպերայի շենքի դոմինանտությունը (նկ. 3բ): Օրինակելի է նաև մետրոյի՝ «Հանրապետության հրապարակ» կայարանի հատվածում գտնվող հետիոտն գոտու հորինվածքային կառուցվածքը, որտեղ կանաչապատ մակերեսներն իրականացված են ճառագայթաձև՝ շեշտադրելով շատրվանի դոմինանտությունը (նկ. 3գ):



Նկ. 3. Հանգույցների ճարտարապետահատակագծային հորինվածքային կառուցվածքը.

ա - Սախարովի հրապարակ, բ - Ազատության հրապարակ, գ - մետրոյի՝ «Հանրապետության հրապարակ» կայարանի հատվածի հետիոտն գոտի

Խաչմերուկներում կամ այլ տրանսպորտային հաղորդակցությունների հատման վայրերում է դիտորդը կողմնորոշվում հետագա շարժման ուղղության համար: Այդ առումով մեծ ուշադրություն է դարձվում ճարտարապետական մանրամասնություններին և դրանց ընկալմանը, ինչի արդյունքում մեկ տրանսպորտային հաղորդակցության հանգույցից անցումը մյուսին ընկալվում է՝ ինչպես անցումը մեկ կառուցվածքային էլեմենտից մյուսը [5]:

Ճարտարապետ Ա. Թամանյանի մշակած առաջին գլխավոր հատակագծում գլխավոր հանգույցային կետեր հանդիսացող հատվածներում նախագծվեցին անկյունային շինությունները: Անկյունային շինությունները քաղաքի հատակագծային կառուցվածքում կատարում են կարևորագույն դեր. կազմակերպում են քաղաքաշինական հանգույցները՝ որոշակի գործառնական ուղղվածության համալիրների փոխկապակցվածության ապահովմամբ, լուծում են փողոցային ցանցի հատումներում-միացումներում (խաչմերուկներում) կառուցապատման խնդիրը՝ կատարելով անցում մի փողոցից և կառուցապատման որոշակի հատկանիշներ կրող հատվածից մյուսին, կողմնորոշիչներ են հանդիսանում քաղաքի ծավալատարածական կազմակերպման ուրվապատկերում, կատարում են անցումային և միավորող դեր մի գործառույթ և ուրույն ճարտարապետական ոճ ներկայացնող կառուցապատումից մյուսին [12]: Սակայն որոշ դեպքերում խախտվում է անկյունային շենքերի վերոնշյալ բնութագրերի արտահայտչականությունը և հանգույցի ընթերցանելիությունը:

Վերաարժևորման առանձնացված օբյեկտների մանրամասն բացահայտումները և դասակարգումները հնարավորություն են տալիս SWOT վերլուծության օգնությամբ որոշել առանձնացված օբյեկտների և միջավայրի այլ բաղադրիչների գեղագիտական որակի հնարավոր հետագա բարելավման հնարավորությունները՝ ըստ գործոնների չորս հիմնական կատեգորիաների՝ ուժեղ կողմերի (Strengths), թույլ կողմերի (Weaknesses), վերաարժևորման հնարավորությունների

(Opportunities) և սպառնալիքների (Threats), ինչը հնարավորություն է տալիս պարզել արտաքին և ներքին միջավայրի գործոնների ազդեցությունը «Փոքր կենտրոնի» գեղագիտական կերպարի վերաարժևորման վրա (աղյուսակ):

Աղյուսակ

Ուղիների և հանգույցների SWOT վերլուծություն

Տարրեր	Բաղադրիչներ	Ուժեղ կողմերը (ենթակա պահպանման)	Թույլ կողմերը (ենթակա վերաարժևորման)	Վերաարժևորման հնարավորությունները	Սպառնալիքները
1	2	3	4	5	6
Ուղիներ	Փողոցներ	- Առանձնահատուկ դիմագծի առկայություն, - շրջանների հստակեցում և եզրագծում, - ճարտարապետական հուշարձանների առկայություն	- Գովազդային ձևերի անհամատեղելի և մեծ քանակությամբ ավելացումներ, - շենքերի ճակատների հորինվածքային ամբողջականության բացակայություն, - շենքերի առաջին հարկի մակարդակում բացվածքների և մուտքային հանգույցների թերի լուծումներ	- Հատուկ դիմագծի արտահայտչականության հստակեցում, - շենքերի մասնակի կամ ամբողջական վերաարժևորման միջոցով միջավայրի ամբողջականության և ներդաշնակության սահմանում, - նոր մշակութային տարրերի ներմուծում	- Մարդկային գործոնի ազդեցությամբ փոփոխությունների իրականացում, - չհիմնավորված ճարտարապետական միջամտություններ
	Հետիոտն մուլեր	- Կանաչապատ տարածքների առկայություն, - տրանսպորտային հաղորդակցության բացակայություն, - քաղաքային միջավայրում տեսարանների բարելավում, - գործառնությունների առավելագույն կենտրոնացում	- Անբարեկարգ վիճակ որոշ հատվածներում, - նոսր բուսականություն, - սահմանափակ տարածություններ զարգացման համար, - չհիմնավորված միջամտություններ և ծավալների ավելացումներ	- Ժամանակակից պահանջներով հետիոտն կառուցվածքի ստեղծում, - կանաչ տարածությունների ստեղծում կամ ավելացում, - դեկորատիվ բուսականության միջոցով գունային կերպարային միջավայրի ստեղծում	- Բուսականության քանակական և որակական ապահովման բացակայություն, - չհիմնավորված ճարտարապետական միջամտություններ
Հանգույցներ	Հրապարակներ	- Տարածության հիմնական հատկանիշների (ամբողջականություն, դոմինանտի առկայություն, մեկուսացվածություն, բաց կենտրոն) առկայությամբ ուղղորդվող հորինվածքային կառուցվածք, - հատուկ դիմագծի առկայություն	- Միջավայրի դիմագծին չհամապատասխանող օբյեկտների ավելացումներ, - գովազդային ձևերի անհամատեղելի և մեծ քանակությամբ ավելացումներ, - շենքերի վրա իրականացված ինքնակամ վերակառուցման աշխատանքներ	- Կանաչապատման համակարգը որպես հորինվածքային կառուցվածքի բաղադրիչ օգտագործում, - շենքերի վերաարժևորմամբ միջավայրի ներդաշնակ ամբողջականության ապահովում, - դեկորատիվ բուսականության միջոցով գունային կերպարային միջավայրի ստեղծում, - հետիոտն գոտիների կազմակերպում, - համալիր բարեկարգում	- Մարդկային գործոնի ազդեցությամբ փոփոխությունների իրականացում, - չհիմնավորված ճարտարապետական միջամտություններ, - բուսականության քանակական և որակական ապահովման բացակայություն

1	2	3	4	5	6
	Հետիոտն գոտիներ	• Ճարտարապետական հորինվածքով հատուկ շատրվանների և ջրային կառույցների առկայություն, • գործառույթների առավելագույն կենտրոնացում, • կանաչապատ տարածքների առկայություն, • քաղաքային միջավայրում տեսարանների բարելավում	• Որոշ անհրաժեշտ հատվածներում հետիոտն գոտիների բացակայություն, • անբարեկարգ վիճակ որոշ հատվածներում, • նոսր բուսականություն որոշ հատվածներում, • չհիմնավորված ճարտարապետական միջամտություններ և ծավալների ավելացումներ	• Միջավայրի վերաարժևորմամբ դոմինանտների շեշտադրում, • զարգացման համար բավարար տարածքների առկայություն, • կանաչ տարածությունների ստեղծում կամ ավելացում, • դեկորատիվ բուսականության միջոցով գունային կերպարային միջավայրի ստեղծում	• Քայքայման վտանգ, • բուսականության քանակական և որակական ապահովման բացակայություն, • չհիմնավորված ճարտարապետական միջամտություններ
	Ստորգետնյա հետիոտն գոտիներ	• Միջավայրում՝ որպես առանձին կառուցվածքի ընկալում	• Որոշ հատվածներ գտնվում են անմխիթար վիճակում և չեն ծառայում նպատակին, • բնական կանաչ տարածությունների բացակայություն	• Կազմավորման և զարգացման համար անհրաժեշտ տարածքների առկայություն, • առանց շրջակա միջավայրի հետ կոնֆլիկտի վտանգի՝ վերաարժևորման ենթակա տարածքների կազմակերպում	• Քայքայման վտանգ
	Խաչմերուկներ	• Առանձնահատուկ դիմագծի առկայություն, • քաղաքի հատակագծային կառուցվածքում անկյունային շենքերով կազմակերպված հանգույցներ	• Գովազդային վահանակների անհամատեղելի և մեծ քանակությամբ ավելացումներ, • շենքերի ճակատների հորինվածքային ամբողջականության բացակայություն, • միջավայրի դիմագծին չհամապատասխանող օբյեկտների ավելացումներ	• Շենքերի առաջին հարկի մակարդակում բացվածքների, մուտքային հանգույցների, ճակատների և տանիքների վերաարժևորման միջոցով միջավայրի բոլոր տարրերի ներդաշնակ միասնականության ձևավորում	• Մարդկային գործոնի ազդեցությամբ փոփոխությունների իրականացում, • չհիմնավորված ճարտարապետական միջամտություններ

Եզրակացություն

Ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են ք. Երևանի «Փոքր կենտրոնի» պատկերային բովանդակությանը վերաբերող ֆիզիկական ձևերի «ուղիներ և հանգույցներ» բաղադրիչները: Այս տարրերը վերաարժևորման հիմնական օբյեկտներն են և համապատասխանաբար բաժանվում են ենթատարրերի:

Այս նպատակով առաձևացվել և վերլուծվել են «Փոքր կենտրոնի» *ուղիների* կառուցվածքը, որը դասակարգվել է ըստ փողոցների և հետիոտն մուլերի, փողոցները՝ ըստ տրանսպորտային ուղիների և մայրերի: Բացահայտվել են «Փոքր կենտրոնում» ուղիների գեղագիտական որակի և դիմագծի արտահայտչականության վրա ազդող հիմնական գործոնները՝ ամբողջ փողոցի եր-

կայնքով կամ որոշ հատվածում կոնկրետ գործունեության կենտրոնացում, փողոցի հորինվածքային կառուցվածք, կառուցապատման բնութագիր (ժամանակագրական հատկանիշներ, ոճական պատկանելիություն, հարկայնություն, ճակատների հորինվածքային կառուցվածք, շենքերի առանձին բաղադրիչներ, նկարվածքներ, օգտագործված նյութեր), քաղաքային կահավորում և գովազդ:

Առանձնացվել և վերլուծվել են «Փոքր կենտրոնի» *հանգույցները*, որոնք դասակարգվել են ըստ հրապարակների, հետիոտն գոտիների, ստորգետնյա հետիոտն գոտիների և խաչմերուկների: Բացահայտվել են «Փոքր կենտրոնի» *հանգույցների* կառուցվածքային բովանդակությունը և առանձնահատկությունները, որոնք մեծամասամբ իրենցից ներկայացնում են ուղիների միացումներ, և գործառույթների առավելագույն կենտրոնացման վայրեր և դրա արդյունքում, որոշ դեպքերում դառնալով դոմինանտ:

Վերաարժևորման հիմնական օբյեկտների բազմագործոն վերլուծությունը և գեղագիտական խնդիրների լուծման առանձնահատկությունների բացահայտումը զուգորդվել են իրավիճակային պայմանների քննարկման հետ: SWOT վերլուծության օգնությամբ տրվել են առանձնացված օբյեկտների և միջավայրի այլ բաղադրիչների ճարտարապետագեղագիտական արժեքներով և միջավայրի ներդաշնակությունը որոշող հորինվածքային օրինաչափություններով պայմանավորված գեղագիտական որակի որոշման և հնարավոր հետագա բարելավման գնահատականներն՝ ըստ գործոնների չորս հիմնական կատեգորիաների՝ ուժեղ կողմերի (Strengths), թույլ կողմերի (Weaknesses), վերաարժևորման հնարավորությունների (Opportunities) և սպառնալիքների (Threats): Գնահատականները հիմք են ծառայում վերաարժևորման առաջարկությունների և մոդելների մշակման համար:

Գրականության ցանկ

- [1] Ա.Ա. Ալոյան, Մ.Վ. Սահակյան, Երևանի կենտրոնի վերաարժևորման խնդիրները. ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ 1 (82) (2022) 3-10:
- [2] Ա.Ա. Ալոյան, Մ.Վ. Սահակյան, Երևան քաղաքի «Փոքր կենտրոնի» քաղաքային լանդշաֆտի վերաարժևորման գեղագիտական խնդիրները. ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ 1(85) (2023) 3-16. DOI: 10.54338/18294200-2023.1-01:
- [3] H. Mintzberg, The rise and fall of strategic planning. Prentice-Hall, New York 1 (1994),
- [4] N. Doratli, S. Onal Hoskara, M. Fasli, An analytical methodology for revitalization strategies in historic urban quarters: a case study of the Walled City of Nicosia, North Cyprus. Cities, 21(4) (2004) 329-348.
- [5] K. Lynch, The image of the city. The MIT Press, 196), 194 p.
- [6] «Տարածքի բարեկարգում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմեր. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թ. հունիսի 21-ի N 12-Ն հրամանի Հավելված:

